

Արարատի մարզի Մասիս համայնքի Այնթապ գյուղի Երևան-Մեղրի մայրուղի 10/1 հողամասում առևտրի սրահի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ



Քաղաքացի՝

Արամ Արամյան

Երևան 2024

Բովանդակություն

| | |
|--|-----------|
| Հավելվածներ | 4 |
| 1.Ընդհանուր տեղեկատվություն..... | 4 |
| 2. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացները | 5 |
| 3.Նախաձեռնողի անվանումը, գտնվելու վայրը, հաշվետվության մշակման հիմքերը և նպատակը..... | 6 |
| 4. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը, բնական պայմաններ, ռեսուրսների բնութագիրը | 7 |
| 4.1 Ենթակա տարածք..... | 7 |
| 4.2. Շրջակա միջավայրի բնութագրերը..... | 13 |
| 4.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը..... | 13 |
| 4.2.2. Սեյսմիկա և երկրաբանություն | 14 |
| 4.2.3. Կլիմա և օդային ավազան | 15 |
| 4.2.4. Հողային ռեսուրսներ..... | 20 |
| 4.2.5.Ջրային ռեսուրսներ..... | 22 |
| 4.2.6. Կենսաբազմազանություն | 25 |
| 4.2.7 Պատմամշակութային և բնության հուշարձաններ..... | 29 |
| 4.2.8 Հատուկ պահպանվող տարածքներ..... | 30 |
| 4.2.9 Սոցիալ-տնտեսական | 32 |
| 5. Նախատեսվող գործունեության բնութագիրը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, (շինարարության շահագործման , փակման փուլեր). 36 | |
| 5.1 Շինարարության փուլ..... | 36 |
| 5.2 Շինարարական հրապարակ..... | 36 |
| 5.3 Ժամանակացույց..... | 43 |
| 6. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր | 45 |
| 6.1 Ջուր..... | 45 |
| 6.2 Շահագործման փուլ..... | 47 |
| 7. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները շինարարության, շահագործման և փակման փուլերում: Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը. | 50 |
| 7.1 Օդային ավազան | 51 |
| 7.2 Հողային ռեսուրսներ..... | 63 |
| 7.3 Ջրային ռեսուրսներ..... | 63 |
| 7.4 Կենսաբազմազանություն | 2... 63 |

| | |
|--|-----------|
| 7.5 Թափոններ..... | 64 |
| 7.6 Աղմուկ և թրթռում..... | 65 |
| 7.7 Արտակարգ իրավիճակներ..... | 67 |
| 7.8 Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը./Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն/..... | 68 |
| 7.9 Պատմամշակութային և բնության հուշարձաններ..... | 68 |
| 7.10 Սոցիալական գործոններ | 68 |
| 7.11 Բարեկարգում և կանաչապատում..... | 69 |
| 8. Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները և վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը/կառավարման պլան/..... | 70 |
| 8.1 Օդային ավազան..... | 70 |
| 8.2 Հողային ռեսուրսներ..... | 71 |
| 8.3 Ջրային ռեսուրսներ..... | 72 |
| 8.4 Կենսաբազմազանություն..... | 73 |
| 8.5 Թափոններ..... | 73 |
| 8.6 Աղմուկ և թրթռում..... | 74 |
| 8.7 Արտակարգ իրավիճակներ..... | 75 |
| 8.8 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն | 76 |
| 8.9 Էներգախնայողություն | 78 |
| 8.10 Պատմամշակութային և բնության հուշարձաններ..... | 78 |
| 8.11 Սոցիալական..... | 78 |
| 8.12 Լանդշաֆտ..... | 78 |
| 8.13 Բարեկարգում և Կանաչապատում..... | 79 |
| 9. Նախատեսվող գործունեության ազդեցության Մոնիթորինգ..... | 80 |
| 10.Բողոքների ընթացակարգ | 81 |
| 11. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան | 82 |
| Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն..... | 93 |
| Շահագործմանն փուլ..... | 96 |
| 12.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ | 99 |
| 13. Հանրային քննարկումներ..... | 106 |
| 14.ՇՄԱԳ հաշվետվության կազմման իրավական հիմքերը | 106 |
| Գրականություն..... | 110 |

Հավելվածներ

Հավելված 1. Տարածքի սեփականության իրավունքի վկայականը

Հավելված 2. Կադաստրային կոորդինատները՝ WGS-84 համակարգով

Հավելված 3. Ճարտարապետա-հատակագծային առաջադրանքը

Հավելված 4. Տարածքի հատակագիծը

Հավելված 5 «Վեոլիա ջուր» ՓԲԸ կողմից տրված պայմանագիրը տեխնիկական պայմանը

Հավելված 6. «ՀԷՑ» ՓԲԸ-ի տեխնիկական պայմանը

Հավելված 7. Համայնքապետարանի նախնական համաձայնությունը

Հավելված 8. Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ

1. Ընդհանուր տեղեկատվություն

Հաշվետվություն - ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնք, գյուղ Այնթապ, Երևան-Մեղրի մայրուղի, հողամաս 10/1 հասցեում առևտրի սրահի կառուցում

Նախաձեռնող- քաղաքացի Արամ Արամյան

Նախաձեռնողի

իրավաբանական հասցեն. - քաղաք Երևան

Հանրապետության փողոց , շենք 71 , բն 29

Գործունեության իրականացման

փաստացի հասցեն

- ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնք, գյուղ Այնթապ, Երևան- Մեղրի մայրուղի, 10/1 հողամաս

Աշխատանքային նախագիծ մշակող- «Անտոնյան Նախագիծ» ՍՊԸ

2. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացները

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ համաձայն:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի Քաղաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «Քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի, վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով»:

Համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի՝ ներկայացված նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով: Գնահատման հաշվետվությունը կազմվել է համաձայն Օրենքի 15-րդ հոդվածի՝ Բ կատեգորիայի նախատեսվող գործունեության՝ ՇՄԱԳ հաշվետվությանը ներկայացվող պահանջներին համապատասխան.

1) նախաձեռնողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.

2) նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան.

3) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների նկարագիրը, ինչպես նաև դրանց օգտագործման նպատակը, ենթակառուցվածքները, ազդակիր համայնքը և դրանց տեղադիրքն արտացոլող իրավասու մարմնի տրամադրած տարածական պլանավորման փաստաթղթերը, իրադրության սխեման կամ քարտեզը՝ Հայաստանի Հանրապետությունում գործող միասնական գեոդեզիական կոորդինատային համակարգով.

4) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության, շահագործման, փակման և հետփակման փուլերում (արտադրական հզորություններ, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).

5) շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները շինարարության, շահագործման և փակման փուլերում.

6) մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.

7) նախագծային փաստաթղթով նախատեսված բնապահպանական կառավարման պլանը.

8) հաստատված հիմնադրույթային փաստաթղթերին նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները.

9) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ, որոնք կմեղմեն, նվազագույնի կհասցնեն կամ կբացառեն հնարավոր բացասական ազդեցությունները: Գնահատման հաշվետվությունը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

3.Նախաձեռնողի անվանումը, գտնվելու վայրը, հաշվետվության մշակման հիմքերը և նպատակը

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է քաղաքացի Արամ Արամյանի ՍՊԸ-ի կողմից: Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Քաղաք Երևան Հանրապետության փողոց , շենք 71 , բն 29:

Գործունեությունը նախատեսվում է իրականացնել Արարատի մարզի Մասիս համայնքի Այնթապ գյուղական բնակավայրի վարչական շրջանում՝ Երևան-Մեղրի մայրուղի, հողամաս 10/1 հասցեում՝ 0,45հա տարածքի վրա:

Շենքի նախագծման համար հիմք են հանդիսացել.

- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ N 22112022-03-0064, հավելված 1:

- Արարատի մարզի Մասիս համայնքի ղեկավարի կողմից 15.11.2023թ. տրված N CPP0-0000-9743 ճարտարապետահատակագծային առաջադրանքը, հավելված 3:

- Համապատասխան թույլտվությունները:

- Շենքի կառուցման նախագծային փաստաթուղթը, հատակագիծը:

Նախատեսվող գործունեության նպատակը: Նախատեսվում է Արարատի մարզի Մասիս համայնքի Այնթապ գյուղական բնակավայրի վարչական շրջանում՝ Երևան-Մեղրի մայրուղի, հողամաս 10/1 հասցեում՝ 0,45հա տարածքի վրա կառուցել առևտրի սրահ՝ բնակչության սպասարկման, վերջիններիս սպասարկման պահանջները բավարարելու նպատակով: Շենքը կառուցումը կատարվելու է ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն» և ՀՀՇՆ1-4.02-99 նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Հողի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

4. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը, բնական պայմաններ, ռեսուրսների բնութագիրը

4.1 Ենթակա տարածք.

Առևտրի սրահի կառուցապատման ենթակա տարածքը գտնվում է Արարատի մարզ, Մասիս համայնքի Այնթապ գյուղական բնակավայրի վարչական շրջանում՝ Երևան-Մեղրի մայրուղի, հողամաս 10/1 հասցեում: Նախատեսվող գործունեության տարածքը կազմում է 0.45հա: Տարածքն ունի պարզ ռելիեֆային կառուցվածք: Հողամասի իրավունքի տեսակը՝ սեփականություն: Տարածքը կառուցապատված չէ: Կից գտնվում են գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ, Մ-2 միջպետական նշանակության ճանապարհ, ինժեներական գծեր հաղորդակցողիներ: Տարածքում բացակայում են պատմամշակութային և բնության հուշարձաններն, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները: Համաձայն Ճարտարապետահատակագծային առաջադրանքի հողի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:


Գործունեության ենթակա տարածքում բացակայում են ինժեներական ենթակառուցվածքները՝ գազմատակարարման, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերը:

Տարածքի եզրագծով առկա են թվով 5 ծառ, որոնք կառուցապատման ընթացքում չեն հատվելու: Տարածքում առկա է անկանոն աճած բուսականություն, բերրի հող:

Նկար 1.



ԻՐԱԿԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:1000





ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆԵԻ ԴԵԿԱԿԱՐ՝

Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

| | | | | | | |
|---|-----------------|------------------|--|--------------------------|---|------|
|  ANTONYAN PROJECT | ՁԱՆ. ՃԱՐՏԱՐԿՈՒՄ | Ա. ԲԱՐՈՍՄԱՆՐԵՍԻ |  ՄԵԿԻՍ ԿՈՒՆՅԱՆ | ՄԵԿԻՍ ԿՈՒՆՅԱՆ | | |
| | ՃԱՐՏԱՐԿՈՒՄ | Է. ԵՐԱՊՈՒՐՈՒՄՅԱՆ | | | ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆԵԻ ՄԱՅՐՈՒԻ, ՀՊՐԱՄԱՍ 1011 ՊԵՏԱԿՐԱՏՈՒՐ ՄԱՍԻՍ | |
| | | | | ՁԱՄԱԿՈՐ ՀԱՏԱԿԱԳԻՃ Մ1:500 | ՁԻՆ | ՁԵՐՑ |
| ՀԱՆՐԱՅԻՆ ԼԱՍՎԱԳՑ՝ ՄՈՐ ՏՈՐԵՆ Ժ. ԴՈՒՐԱՆԱԿՍՅԱՆ | | | | Ձ | 7 | 14 |

Տարածքի ինժեներատեղագրական պայմանները ներկայացված են համաձայն՝ «Հայր և որդի Տիտիզյաններ» ՍՊԸ կողմից տրված ինժեներատեղագրական եզրակացության: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է մարզկենտրոնից՝ 25 կմ հեռավորության վրա: Ընկած է Երևան քաղաքից հարավ-արևելք: Տվյալ տարածքում բարցարձակ նիշերը տատանվում են 839.0-849.0 մետրերի սահմաններում :

Նկար 2,3



Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածաշրջանը տեղադրված է լճակուտակումային Արարատյան հարթավայրի սահմաններում, նրա կենտրոնական մասում: Մակերեսը հարթ է, աննշան թեքությամբ դեպի հարավ-արևելք, Արաքս և Վեդի գետերի կողմը:

Շրջանի երկրաբանական պայմանները. Երկրաբանական տեսանկյունից տվյալ տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են լճագետային նստվածքներ, որոնց արտաքին շերտը ծածկված է դեյուվիալ-էյուվիալ-պրոյուվիալ առաջացումներով՝ որոնք ներկայացված են կավային գրունտներով:

Շրջանի կլիմայական պայմանների համար հիմք է ընդունվել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22.01.24 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ Արարատի մարզի համար, նրա համապատասխան կլիմայական ցուցանիշներով: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է տաք կլիմայական շրջանում: Կլիման չոր, խիստ ցամաքային է:

- Տարեկան միջին ջերմաստիճանը 11.8 °C

- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 43°C
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -29°C
- Օդի հարաբերական խոնավությունը՝ 62%
- Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 250-350մմ
- Քամու միջին տարեկան արագությունը 0.4մ/վ
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, կազմում է 50 սանտիմետր:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա: Տեղամասում հետազոտված խորությունների սահմաններում ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 15մ-ից խորը հատվածներում: Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են:

Տիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում բացակայում են:

Շրջանի սեյսմիկ պայմանները

Համաձայն ՀՀՇՆ 20.04.2020թ.-ի տեղազննվող շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.3g$ արագացմամբ, 9 և ավելի բալլ սեյսմիկությամբ:

Շրջանը գտնվում է Արարատյան դաշտում՝ Միջին-Արաքսյան ճկվածքում և ներկայացված է հզոր միոցենային նստվածքներով:

Տարածքի ինժեներաերկրաբանական կառուցվածքը

Ուսումնասիրվող տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է, ակնադիտական եղանակով, բնական մերկացումների և արխիվային նյութերի հիման վրա: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների երկու շերտ: Ստորև բերվում է այդ շերտերի լիթոլոգիական նկարագրությունները և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները:

Շերտ 1. Հողաբուսական շերտ ավազակավի, կավավազի լցոնումով: Շերտի հզորությունը 0.0-0.40մ է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆևԿ IV-2-82 Ժ-1-ի (9ա) I կարգ:

Շերտ 2. Լիցքեր ավազակավի, կավավազի լցոնումով: Տեխնածին առաջացումներ են: Շերտի հզորությունը 0.40-1.0մ է: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆևԿ IV-2-82 Ժ-1-ի (24բ) II կարգ:

Շերտ-3. Կավ՝ բացից մինչև մուգ շագանակագույն, դեղնավուն, տեղ- տեղ հանդիպում է նաև դարչնագույն և մոխրագույն երանգների, պինդ թանձրությամբ, փոշենման մասնիկների պարունակությամբ, տեղ-տեղ խճի և մանրախճի պարունակությամբ, մանրամիջահատիկ, հոծ: Էյլովիալ-Դեյլովիալ-պրոյլովիալ առաջացումներ են: Շերտի հզորությունը 1.0-7.0մ է: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՆևԿ IV-2-82 Ժ-1-ի III (8գ) կարգ է:

Ուսումնասիրվող տեղամասում գրունտները բարենպաստ են շինարարական աշխատանքներ կատարելու համար, որպես հիմնատակ առաջարկվում է

- շերտ 3-ը /կավային գրունտ /, որոնք ըստ սեյսմիկ հատկությամբ (ՀՀՇՆ 20.04.2020թ-ի) 2-րդ կարգ են:

- ✓ Դիմադրությունը $R = 2.2 \text{ կգ/սմ}^2$
- ✓ Ընկրկելիության գործակիցը $K_0 = 3000 \text{ տ/մ}^3$

Եզրահանգում: Ինժեներատեխնիկական և հիդրոտեխնիկական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ կատարելու համար:

Կառուցապատվող տարածքի հեռավորությունը կից գտնվող հողակտորներից գտնվում է 1-2մ և 12մ հեռավորության վրա ճանապարհից:

Տարածքի իրադրության սխեմաները

Նկար 4



4.2. Շրջակա միջավայրի բնութագրերը

4.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը

ՀՀ Արարատի մարզը գտնվում է Հայաստանի հարավ-արևմուտքում: Հյուսիս-արևմուտքից սահմանակից է Արմավիրի մարզին, հյուսիսից՝ Երևան քաղաքին ու Կոտայքի մարզին, արևելքից՝ Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերին, հարավից՝ Նախիջևանին, հարավ-արևմուտքից՝ Թուրքիային: Մարզի հարավ-արևմտյան եզրին 6-13կմ լայնությամբ ընկած է Արարատյան հարթավայրի հարավ-արևելյան մասը: Մարզը հյուսիսից, արևելքից և հարավ-արևելքից եզրավորվում է Արագածի և Գեղամա լեռնազանգվածներով, Ուրծի շղթայով, իսկ հարավից և արևմուտքից՝ Հայկական պարով, Մեծ և Փոքր Մասիսներով:

Նկար 5.



Արարատի մարզի տարածքը եղել է պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Ոստան գավառի մի մասը: Այստեղ էին գտնվում Արտաշատ և Դվին մայրաքաղաքները: Արարատի մարզը սահմանակից է Թուրքիային և Ադրբեջանի կազմում գտնվող Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը: Մարզը զբաղեցնում է 2090 կմ² տարածք՝ ՀՀ տարածքի 7%-ը: Մարզն իր մեջ ընդգրկում է Արարատի, Արտաշատի և Մասիսի տարածաշրջանները՝ 4

քաղաքային և 93 գյուղական բնակավայրերով: Մարզկենտրոնը Արտաշատ քաղաքն է: Արարատի մյուս քաղաքներն են՝ Արարատը, Մասիսը և Վեդին:

Տարածաշրջանին բնորոշ են հին ծալքավորումների մնացորդները, տեղ-տեղ լճաայլովիալ և պրոյլովիալ նստվածքների տակից երկրի մակերես են դուրս գալիս մի քանի տասնյակ մետրի հասնող բլուրների տեսքով: Տարածաշրջանին բնորոշ են հզոր, տեղ-տեղ մինչև 400 մ, լճագետային, այլովիալ-պրոյլովիալ նստվածքները, լավային շերտերը, ձգվելով Ախուրյանի գետաբերանից մինչև Գայլի դրունք հովիտը: Տարածքի ամենացածր կետը Արաքս գետի հունի մոտ է՝ 801մ, ամենաբարձրը կետը հյուսիս-արևելքում գտնվող Սպիտակասար լեռնագագաթն է՝ 3555,7մ բարձրությամբ: Տարածքի բլրոտ, է մոտ 30%-ը հարթավայրային է:

Տարածաշրջանի լանդշաֆտային գոտին կիսաանապատային է՝ անապատային տեղամասերով: Այն բաժանվում է երկու մասի՝ հարթավայրային և լեռնային: Հարթավայրային մասը՝ 10-15կմ լայնությամբ ձգվում է Հրազդան գետից մինչև ՀՀ Պետական սահման: Մարզի լեռնային մեծ մասը զբաղեցնում են Գեղամա լեռների լանջերը և Ուրծի ու Երանոսի լեռները: Այստեղ առանձին կղզյակներով պահպանվում է անտառը, որը հիմնել է հայոց Խոսրով Կոտակ թագավորը, IV դարում՝ այժմ Խոսրովի արգելոցը:


4.2.2. Սեյսմիկա և երկրաբանություն

ՀՀ Արարատի մարզում առկա են սողանքային գոտիներ, որոնք կազմում են հանրապետության սողանքային տարածքների 2,5%-ը: Սողանքային երևույթները զարգացած են հիմնականում հյուսիս-արևելյան մասի նախալեռնային բնակավայրերում՝ մոտ 3 սողանքային օջախ, ընդհանուր 13094 հա տարածքով:

Մարզը գտնվում է ոչ ակտիվ սեյսմիկ գոտում և սողանքների ակտիվացումը հիմնականում կրում է սեզոնային բնույթ կապված՝ գրունտային զանգվածների գրավիտացիոն տեղաշարժի հետ:

Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի՝ ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի՝ ուսումնասիրվող տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ $A_{max}=0,4g$:

Նկար 6.




4.2.3. Կլիմա և օդային ավազան

Արարատի մարզը ծովի մակարդակից գտնվում է 800-2300մ բարձրությունների վրա: Տարածաշրջանում առկա են ՀՀ-ում տարածված կլիմայի 8 տիպերից 6-ը՝ չոր ցամաքային, չոր խիստ ցամաքային, չափավոր ցամաքային, բարեխառն, ցուրտ լեռնային, ձյունամերձ, պայմանավորված լեռնային մակերևույթի առանձնահատկությամբ:

Գտնվում է տաք կլիմայական գոտում, կլիման խիստ չոր ցամաքային է՝ ամառը շոգ, առավելագույն ջերմաստիճանը հաճախ բարձրանում է մինչև +41°C, ձմռանը ցուրտ, անամպ, անհողմ, առավելագույն նվազագույնը ջերմաստիճանը՝ մինչև -30°C: Բնորոշ են լեռնահովտային քամիները: Հաստատուն ձնածածկույթ չի ձևավորվում: Մթնոլորտային տեղումների քանակը կազմում է 200-300մմ: Տարածաշրջանն ունի բարենպաստ կլիմայական գոտիներ կապված՝ լույսի և ջերմության առատության հետ:

Մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներ են հանդիսանում արտադրական ձեռնարկությունները, ավտոտրանսպորտի և էներգետիկայի օբյեկտները:

Նկար 7



Գործունեության տարածքի կլիմայական պայմաններն ներկայացված են ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ Արարատ և Արտաշատ քաղաքների համար, քանի որ փաստաթղթում բացակայում են Մասիս հիամայնքի վերաբերյալ տեղեկատվությունը:

Աղյուսակ 1.
 Օդի ջերմաստիճանը, °C

ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,
 ՁՄՈՒԱՆ ՍԿԻՋԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

| Բնակավայրի անվանումը | Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C | | | | | | | | | | | | Միջին տարեկան, °C | Բացարձակ նվազագույն, °C | Բացարձակ առավելագույն, °C |
|----------------------|-------------------------------------|---------|------|-------|-------|--------|--------|---------|-----------|-----------|----------|-----------|-------------------|-------------------------|---------------------------|
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 4. Արարատ | -3.1 | 0.2 | 6.9 | 13.4 | 18.1 | 22.6 | 26.4 | 26.0 | 21.1 | 13.8 | 6.2 | 0.0 | 12.6 | -31.6 | 42.6 |
| 7. Արտաշատ | -3.5 | -0.5 | 6.0 | 12.8 | 17.5 | 21.8 | 25.5 | 24.9 | 20.0 | 13.1 | 6.0 | -0.4 | 11.9 | -28.9 | 42.6 |

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Աղյուսակ 2

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 ՕԴԻ հարաբերական խոնավությունը

| Բնակավայրի անվանումը | ՕԴԻ հարաբերական խոնավությունը, % | | | | | | | | | | | | | | | | | |
|----------------------|----------------------------------|---------|------|-------|-------|--------|--------|---------|-----------|-----------|----------|-----------|---------------|---|---------------------------|---|---------------------------|----|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Միջին տարեկան | Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | | Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | | |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | Միջին ամսական | Միջին ամսական, ժամը 15-ին | Միջին ամսական | Միջին ամսական, ժամը 15-ին | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | |
| 4. Արարատ | 78 | 71 | 60 | 57 | 55 | 49 | 45 | 46 | 50 | 62 | 72 | 78 | 60 | 78 | 63 | 45 | 32 | |
| 7. Արտաշատ | | 78 | 73 | 63 | 59 | 59 | 54 | 52 | 52 | 57 | 67 | 75 | 79 | 64 | 78 | 62 | 52 | 35 |

Աղյուսակ 3.

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

ՄԹՆՈՒՆՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

| Բնակավայրի անվանումը | Տեղումների քանակը _____ միջին ամսական _____ մմ օրական առավելագույն | | | | | | | | | | | | | Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ | Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ |
|----------------------|---|---------|------|-------|-------|--------|--------|---------|-----------|-----------|----------|-----------|---------|---|---|
| | ըստ ամիսների | | | | | | | | | | | | Տարեկան | | |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| 4. Արարատ | 17 | 18 | 24 | 36 | 36 | 21 | 10 | 7 | 8 | 18 | 21 | 17 | 233 | 97 | 136 |
| | 26 | 34 | 26 | 31 | 34 | 37 | 20 | 31 | 28 | 32 | 35 | 28 | 37 | | |
| 7. Արտաշատ | 18 | 18 | 26 | 36 | 39 | 23 | 11 | 6 | 10 | 22 | 23 | 17 | 249 | 102 | 147 |
| | 18 | 20 | 32 | 36 | 43 | 34 | 27 | 25 | 28 | 36 | 38 | 22 | 43 | | |

Քամի

Աղյուսակ 4.


Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)

| Բնակավայրի անվանումը | Ամիսներ | Կրկնելիությունը, % | | | | | | | | Անդրորի կրկնելիությունը, % | Միջին ամսական արագությունը, մ/վ | Փերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին | Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ | Փերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին | Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ | | |
|----------------------|-----------|-------------------------|------------------|----------|----------------|-----------|----------------|----------|------------------|----------------------------|---------------------------------|---|--|--|---|---------------------|----|
| | | Միջին արագությունը, մ/վ | | | | | | | | | | | | | | ըստ ուղղությունների | |
| | | Հյուսիսային | Հյուսիս-արևելյան | Արևելյան | Հարավ-արևելյան | Հարավային | Հարավ-արևմտյան | Արևմտյան | Հյուսիս-արևմտյան | | | | | | | 11 | 12 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | | |
| 5. Արարատ | հունվար | 16 | 3 | 8 | 18 | 10 | 5 | 11 | 29 | 50 | 1.3 | Հս | 2.6 | ՀվԱրլ | 2.7 | | |
| | | 1.9 | 1.6 | 1.7 | 2.7 | 2.1 | 1.5 | 1.9 | 2.2 | | | | | | | | |
| | ապրիլ | 13 | 4 | 8 | 29 | 15 | 5 | 8 | 18 | 28 | 2.3 | | | | | | |
| | | 2.7 | 2.3 | 2.7 | 3.4 | 2.8 | 2.7 | 2.4 | 2.8 | | | | | | | | |
| | հուլիս | 18 | 3 | 6 | 14 | 12 | 5 | 10 | 32 | 23 | 2.3 | | | | | | |
| | | 2.6 | 2.7 | 2.2 | 2.7 | 2.2 | 2.1 | 2.6 | 3.0 | | | | | | | | |
| | հոկտեմբեր | 17 | 3 | 8 | 18 | 13 | 4 | 11 | 26 | 39 | 1.5 | | | | | | |
| | | 2.3 | 1.8 | 1.7 | 2.3 | 2.0 | 1.9 | 2.1 | 2.5 | | | | | | | | |
| 8. Արտաշատ | հունվար | 7 | 8 | 10 | 20 | 12 | 10 | 15 | 18 | 88 | 0.3 | ՀվԱրլ | 2.0 | ՀվԱրլ | 3.1 | | |
| | | 1.7 | 1.7 | 2.7 | 3.1 | 2.4 | 2.0 | 2.2 | 1.7 | | | | | | | | |
| | ապրիլ | 4 | 9 | 12 | 27 | 13 | 8 | 13 | 14 | 74 | 0.6 | | | | | | |
| | | 1.7 | 1.8 | 2.1 | 2.8 | 2.5 | 2.8 | 2.8 | 2.6 | | | | | | | | |
| | հուլիս | 8 | 7 | 9 | 16 | 9 | 9 | 18 | 24 | 80 | 0.4 | | | | | | |
| | | 1.7 | 1.9 | 1.7 | 2.0 | 2.0 | 2.0 | 2.7 | 2.3 | | | | | | | | |
| | հոկտեմբեր | 7 | 12 | 12 | 19 | 8 | 10 | 16 | 16 | 85 | 0.3 | | | | | | |
| | | 1.6 | 1.5 | 2.1 | 2.0 | 1.5 | 2.1 | 2.4 | 2.0 | | | | | | | | |

Համաձայն նորմատիվային փաստաթղթի՝ Արարատ քաղաքում քամու միջին տարեկան արագությունը կազմում է 1,7մ/վ, 25 տարվա կրկնելիությամբ՝ 25մ/վ: Ամենաշոգ ամսվա միջին ջերմաստիճանը կազմում է 26,8⁰C, բացարձակ առավելագույնը՝ 43⁰C, ամենացուրտ ամիսվա միջինը՝ -4,2⁰C, նվազագույն ջերմաստիճանը՝ -32⁰C: Տարեկան միջին տեղումների քանակը Արարատ քաղաքում կազմում է 233մմ, գրունտի սառչման խորությունը՝ 37սմ:

Նկար 8.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ
ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**



Օդային ավազան. Արարատի մարզում օդային ավազանի աղտոտումը կապված է տարեց-տարի ավելացող տրանսպորտային միջոցների, արտադրական և կենցաղային արտանետումներից, համայնքների աղբավայրերում կուտակված պոլիէթիլենային թաղանթների այրումից առաջացած թունավոր նյութերից: Օդային ավազանի աղտոտվածության մոնիթորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Ներկայացվում է օդային ավազանի **Միջին հնգամյա կոնցենտրացիա (Ֆոն), մգ/մ³**՝ Արարատ քաղաքի համար՝ համաձայն՝ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» (ՀՄԿ) ՊՈԱԿ-ի կայք էջի.

- Ազրոտի երկօքսիդ՝ 0,018մգ/մ³

- Ծծմբի երկօքսիդ՝ 0,026 մգ/մ³
- Փոշի՝ 0.110 մգ/մ³

Համաձայն «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումներ»-ի բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների (հնգամյա միջին) մինչև 10 000 բնակիչ ունեցող բնակավայրերի համար, որոնց թվին է պատկանում Այնթապ բնակավայրը օդի աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.071 մգ/մ³
- Ծծմբի երկօքսիդ (**SO2**)՝ 0,006 մգ/մ³
- Ազոտի երկօքսիդ (**NO2**)՝ 0,023մգ/մ³
- Ածխածնի օքսիդ (**CO**)՝ 0.8 մգ/մ³

4.2.4. Հողային ռեսուրսներ

Արարատի մարզին հիմնականում բնորոշ են բնական կիսանապատային՝ անապատային տեղամասերով լանդշաֆտային գոտիները: Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Կիսանապատային գոտին գերակայում է Արարատյան հարթավայրում, իսկ միջին բարձրության լեռներում գերակայում են չոր տափաստանային, գեղամա լեռնաշղթայի լանջերին՝ ալպյան գոտիները:

Տարածաշրջանում գերակշռում են բաց շականակազույն, գորշ, տեղ-տեղ աղակալած կիսանապատային հողերը, որոնք աստիճանաբար վերածվել են մշակովի հողերի: Կիսանապատային հողերն ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, փոշե-հատիկային ստրուկտուրայով: Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էրոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են ինչպես ավելի թեթև, այնպես էլ ծանր մեխանիկական կազմով հողերով: Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով: Կիսանապատային գորշ հողերին բնորոշ է հումուսային հորիզոնների ոչ մեծ հզորությունը (25-40 սմ), պրոֆիլի քարքարոտությունն ու կմախքայնությունը: Պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ (հողի վերին

շերտերում՝ մինչև 8-18 %, իսկ ենթահողում՝ հաճախ մինչև 30-40 %): Կիսաանապատային գորշ հողերի պրոֆիլի միջին մասերում ձևավորվում է կարբոնատային ցեմենտացած հորիզոն՝ 15-30 սմ հզորությամբ, որը խանգարում է մշակաբույսերի նորմալ զարգացմանը: Անստրուկտուր են, հումուսի պարունակությունը տատանվում է 1,5-2,0 %-ի սահմաններում: Ունեն թույլ և միջին հիմնային ռեակցիա (pH=7,5-8,5): Այս հողերը շարժուն ազոտով՝ թույլ, ֆոսֆորով՝ թույլ և միջակ, կալիումով՝ միջակ և լավ են ապահովված:

Մարզի գյուղնշանակության հողերը կազմում են 156,901,71հա:

Արաքսի և նրա վտակների փուխր բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով, ցածրադիր ողողատներում՝ գերխոնավ հողերն ու ճահճուտները: Լճային նստվածքների հզորությունը հասնում է մի քանի տասնյակ մետրի:

Մարզի հողատարածքների ոռոգումն ապահովելու նպատակով կառուցված են Մխչյանի, Ագատի, Արմաշի, Քաղցրաշենի, Մասիսի, Արագափի խոշոր ջրհան կայանները:

Նկար 9.





Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես պտղաբուծության(ելակ, ծիրան, խաղող), բանջար-բոստանային մշակաբույսների արտադրության, այնպես էլ խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծության, խոզաբուծության

և թռչնաբուծության համար:

Մարդու գործունեության հետևանքով առաջանում է հողային ծածկույթի աղտոտում ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ և այլն) և ցիանական միացություններով: Հողերի որակի գիտահատումն իրականացվում է ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի և ՀՀ Առողջապահության նախարարի 2015թ. հունիսի 16-ի «ՀՀ Առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 25-Ն հրամանի համաձայն:

Համաձայն Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2022թ. տարեկան տեղեկագրի՝ հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներ են կատարվել նաև Արարատի մարզում: Ներկայացվում է աղտոտվածության տվյալները աղյուսակով և գրաֆիկական սխեմաներով:

| Մարզ/Քաղաք | Վանադիում | Պղինձ | Ցինկ | Քրոմ | Նիկել | Արսեն | Կապար |
|------------|---|-----------|---------|----------|-----------|---------|-------|
| | Ֆերագանցումը համապատասխան ՄԹԳ-ից, աեզամ | | | | | | |
| Արարատ | 1.2 | 11.0-14.7 | 2.9-4.3 | 8.0-11.3 | 13.8-17.5 | 3.5-6.5 | - |



Գծապատկեր 128. Որոշ մարզերի հողային ծածկույթում մետաղների պարունակությունը, 2022թ.

4.2.5.Ջրային ռեսուրսներ

Արարատի մարզի գետերը պատկանում են Արաքս գետի ավազանին: Մարզի ջրային ռեսուրսները ձևավորվում են 4 գետերով, տարածքով են հոսում՝ Արաքս, Հրազդան, Ազատ, Վեդի խոշոր գետերը, համեմատաբար փոքր գետերից՝ Արածոն, Չորասու հեղեղատարը, Ազատի ու Վեդի գետերի վտակները՝ Քաջառուն, Խոսրովը, և այլն: Արարատյան հարթավայրով անցնող գետերը ունեն ոռոգիչ նշանակություն: Ազատ գետի վրա Լանջազատ գյուղի մոտ կառուցված է Չովաշենի ջրամբարը/70մլն մ³/ և համանուն ՀԷԿ-ը, Արածո գետի վրա՝ Զանգակատան ջրամբարը/15մլնմ³/: Մարզում 19-20-րդ դարերում կառուցվել են

Կախանովի և Արատաշատի ջրանցքները:

Արարատի մարզի Մասիս համայնքի տարածքով են անցնում Հրազդան գետը, հարակից՝ Այրր լճից սկիզբ առնող Սև ջուր գետը, հարավում՝ պետական սահմանի երկարությամբ՝ Արաքս գետը, որը հորդանում է գարնանը, երբեմն դուրս գալով ավերից: Համայնքից հարավ գտնվում են արհեստական լճակներ: Մարզն ունի բնառեսուրսային՝ հողային ջրային ներուժ՝ կապված արտեզյան ջրհորների առկայության և Հրազդան գետի հետ:

Վեդի գետի երկարությունը կազմում է 58կմ, ջրհավաք տարածքը՝ 998 կմ², հոսքը՝ 64 մլն մ³: Ազատ գետի երկարությունը 56 կմ է, ջրհավաք տարածքը՝ 952 կմ², հոսքը՝ 217 մլն մ³:



Կան բազմաթիվ դրենաժային ցանցեր և խորքային հորեր:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքի ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով, սնումը ձնհալքային է, անձրևաջրերից գետերը գարնանը վարարում են: Ամռանը որոշ գետեր ցամաքում են:

Մարզում առկա են հանքային ջրեր՝ Արարատ և Վեդի բնակավայրերում:

Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների մոնիթորինգն իրականացվում է շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, համաձայն՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման 12.1 հավելվածի համաձայն:

Նկար 9.



Արարատյան ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 12 դիտակետում, այդ թվում՝ 11 գետային և 1 ջրամբարային (Ազատի ջրամբար): Համաձայն Շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների մասին 2024թ. 1-ին եռամսյակի տեղյակագրի՝ Վեդի գետի ջրի որակը Արարատից ներքև մարտ ամսին գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Մեծամոր գետի որակը Վաղարշապատից հարավ-արևելք գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Ազատի ջրամբարի ջրի որակը 2023թ. հոկտեմբերին գնահատվել է 2-րդ դաս: Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում: Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև և Արզնի ՀԷԿ-ից վերև հատվածներում փետրվարին և մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Արգել գյուղից ներքև հատվածում ջրի որակը փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ և գետաբերանի հատվածներում ջրի որակը փետրվարին և մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Գեղանիստ գյուղի մոտ և

Երևանյան լճի մուտքի մոտ հատվածներում ջրի որակը փետրվարին և մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

2024 թվականի 1-ին եռամսյակում դիտարկումներ են իրականացվել Արաքս գետի 3 Որոշված դիտակետում: ցուցանիշներից գերազանցվել են թթվածնի քիմիական պահանջարկի, թթվածնի հնգօրյա կենսաքիմիական պահանջարկի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, նատրիումի, մագնեզիումի, պղնձի, քրոմի, մանգանի, նիկելի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի համապատասխան ՍԹԿները:

4.2.6. Կենսաբազմազություն


Տարածաշրջանի բնական լանդշաֆտը կիսաանապատային, անապատային և լեռնահարթավայրային է: Մարզում անտառածածկ տարածքներ գրեթե չկան, անտառապատ տարածքները կազմում են տարածքի 0,1%-ը: Տարածքին բնորոշ են չորասեր ու աղասեր բույսերը, գյուղատնտեսական նշանակության մշակաբույսերը: Խոնավ վայրերում աճում են եղեգներ: Համաձայն ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 10-ի «Հայաստանի հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N 54 արձանագրության՝ Հայաստանի ֆլորան այժմ ներկայացված է շուրջ 3800 տեսակի անոթավոր բույսերով՝ 160 ընտանիքից և 913 ցեղից:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության Կենսաբազմազանության պահպանության, օգտագործման և վերարտադրության ռազմավարության և գործողությունների պետական ծրագրի» Արարատի մարզի տարածքում ՀՀ Կարմիր գրքում ներառված են 137 բուսատեսակ, կենդանատեսակներից՝ 51 անողնաշարավոր կենդանիներ, 92 ողնաշարավոր տեսակներ:

Համաձայն Արարատի մարզի 2017-25թթ. զարգացման ծրագրի՝ Հայաստանի բուսատեսակներից կեսն աճում է Արարատյան դաշտավայրում և մոտակա լեռնաշղթաներում: Մարզում բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված և էնդեմիկ տեսակներից աճում են ծիածանաթաղանթը, թրաշուշանը, վարդակակաչը և այլն: Կենդանատեսակներից՝ վարազը, արքայական եղջերուն, վայրի խոզը, լեռնային այծը և այլն: Արարատյան հարթավայրի ջրաճահճային հանդակները բնադրավայր ու ապրելավայր են հանդիսանում թռչունների ավելի քան 200 տեսակի համար: Արարատյան դաշտում ձկնային տնտեսությունների կողմից ստորգետնյա ջրերի ոչ արդյունավետ օգտագործումը հանգեցրել է բազմաթիվ աղբյուրների և ջրաճահճային տարածքների չորացման, որոնք կենսամիջավայր էին հանդիսանում կենդանական և բուսական աշխարհի բազմաթիվ ներկայացուցիչների

համար:

Նկար 10.



Քուսական աշխարհ. մարզի տարածքում գերակշռում են կիսաանապատային և անապատային չորասեր բուսատեսակները, իսկ ցածրադիր, ճահճապատ տարածություններում՝ եղեգնի մացառուտները: Հալոֆիլ անապատներին բնորոշ բույսերն են՝ սոլերոս (*Salicornia europaea*), կալիդիում (*Kalidium caspicum*), աղահասկ (*Halostachys caspica*), բորակարույս (*Nitraria schoberi*): Գիպսոֆիլ անապատները բնորոշ են արաքսյան հարթավայրը շրջապատող լեռնաշղթային (Երանոս, Երախ, Ուրց): Գիպսոֆիլ անապատներին բնորոշ բույսեր են՝ սապնարմատ (*Gypsophila*) ցեղի ներկայացուցիչները, հալանտիումը (*Halanthium rarifolium*), մոլոկան Թախթաջյանի (*Lactuca takhtadzhianii*), զուգատերև (*Zygophyllum atriplicoides*) և այլն: Տարածաշրջանում հանդիպում են նաև՝ գեղաձնկիկ մատիտեղանման (*Calligonum polygonoides*), հազարատերևուկ նեղատերև

(*Achillea tenuifolia*), եղջերախոտ, եղնաբղեղ ավազուտային (*Ceratocarpus arenarius*), զեյդլիցիա ծաղկավոր (*Seidlitzia florida*): Աճում են նաև այլ չոր բույսեր՝ տերեփուկ, երիցուկ, իշակաթնուկ:

ՎՎ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակներից են՝ Խնկեղեգ ճահճային (*Acorus calamus* L.), հացհամեն գլխիկավոր (*Trigonella capitata* Boiss.), Հիրիկ մուսուլմանական (*Iris musulmanica* Fomin), Բիեներցիա շուրջաթև (*Bienertia cycloptera* Bunge), Միկրոկնեմում մարզանանման (*Microcnemum coralloides*), Կղմուխ Օշեի (*Inula aucheriana* DC) և այլն:

Նկար 11.



Չիրիկ մուսուլմանական - *Iris musulmanica* Fomin



Կղմուխ Օշեի - *Inula aucheriana* DC.

Մասիսի տարածաշրջանին բնորոշ են օշինդրը, անթառամը, օշանը, հավամրգին:

Կենդանական աշխարհ. Կենդանական աշխարհին բնորոշ են կիսաանպատային ցամաքային էկոհամակարգին բնորոշ կենդանատեսակները: Տարածաշրջանում հանդիպում են անողնաշարավոր կենդանիներից 51, իսկ ողնաշարավորներից 92 տեսակ: Տարածաշրջանում ողնաշարավոր կենդանիներից հանդիպում են՝ գորշուկը, նապաստակը, ճահճակուղբը, ժայռային մողեսը, լորտու սովորականը, դաշտամուկը, քարակզաքիսը և այլն: Անողնաշարավորներից հանդիպում են՝ անձրևաորդը, մրջյունը, ծղրիդը, ճռիկը, մորեխը և այլն: Սողուններից հանդիպում են գյուրգա, հայկական իժ, լորտուներ, Արևմտյան վիշապիկը (*Eryx jaculus*) և այլն: Թռչուններից հանդիպում են տնային ճնճուկը մոխրագույն ագռավը

Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով՝ տնային ճնճուկը (*Passer domesticus*), մոխրագույն ագռավը (*Corvus corone*), անտառային արտույտը (*Lullula arborea*), գյուղական ծիծեռնակը (*Hirundo rustica*), եղինջաթռչնակը (*Troglodytes troglodytes*), ժայռային ծիծեռնակը (*Ptyonoprogne rupestris*): Գետերի իխտիոֆաունան ներկայացնում են բրամը (*Abramis brama*), ծածանը (*Cyprinus carpio*), սովորական լոքոն (*Silurus glani*) և այլն: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ:

Տարածաշրջանի կիսաանապատներում հանդիպում են բազմաթիվ էնդեմիկ անողնաշար տեսակներ, ներառյալ միջերկրածովային, իրանական, կովկասյան և դրիմյան ծագում ունեցողները:

Տարածաշրջանին բնորոշ էնդեմիկ կենդանատեսակներից և թռչնատեսակներից են՝ Մեծաչք ճպուռ (*Lestes macrostigma*), Սևծովյան ճպուռ (*Libellula pontica* Selys), Վարդագույն հավալուսն (*Pelecanus onocrotalus* Linnaeus), Փոքր ձկնկույ (*Phalacrocorax pygmaeus* Pallas), Ճչան կարապ (*Cygnus cygnus*), (Գիշանգղ *Neophron percnopterus* Linnaeus), Օձակեր արծիվ (*Circaetus gallicus*), Տափաստանային մկնաճուռակ (*Circus macrourus*), Տափաստանային արծիվ (*Aquila nipalensis orientalis* Hodgson), Կրկնակոնգար (*Gallinago medi*), Ներկարար (*Coracias garrulus*), Սպիտակափող սոխակ (*Irania gutturalis*), Կոնգար կաճաղակ (*Haematopus ostralegus* Linnaeus), Փոքր ձկնկույ - (*Phalacrocorax pygmaeus* Pallas) այլն:

Նկար 12.



Փոքր ձկնկույ - *Phalacrocorax pygmaeus* Pallas



Ներկարար - *Coracias garrulus*

Կենդանատեսակային կազմից կարևորվում է նաև աղուտային հալոֆիլ համակեցությունների հետ է կապված էնդեմիկ տեսակի՝ Արարատյան որդանի (*Porphiophora hamelii*) գոյությունը, որը զարգանում է որդանախոտի (*Aeluropus littoralis*) արմատների վրա:



Նկար 13. Արարատյան որդան (*Porphiophora hamelii*)

Մասիս տարածաշրջանում կենդանիներից տարածված են սողունները, կրծողները, շատ են թռչնատեսակները:

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների և բուսատեսակների հանդիպելը գրեթե բացառվում է:

4.2.7 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով և տեսարժան վայրերով՝ Արտաշատ, Դվին, Խոր Վիրապ, Կաքավաբերդ, Հովհաննես-Կարապետ, Ստեփանոս, Վիշապաքարեր:

Համաձայն ՀՀ Կառավարության 2007թ. մարտի 15-ի «Հայաստանի հանրապետության Պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա Պատմության և Մշակույթի անշարժ հուշարձանների» N 385-Ն որոշման հավելված 4-ի՝ Այնթափ բնակավայրի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում ներառված է 1 հուշարձան):

Աղյուսակ 5

ԱՅՆԹԱՓ գյուղ

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---------|------------|---|---|
| 1 | | | ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ | 1973 թ. | գյուղի մեջ | S | 1 |

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ Արարատի մարզում առկա են հետևյալ բնության հուշարձանները:

Աղյուսակ 6.

| | Երկրաբանական | |
|---|--------------------|---|
| 1 | «Անձավիկ» քարանձավ | Արարատի մարզ, Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտուակունք գետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 08 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա |

| | | |
|----|--|---|
| 2 | «Դաշտաքար» քարանձավ | Արարատի մարզ, Դաշտաքար գյուղից 02 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400 մ բարձրության վրա |
| 3 | «Մեծ հոր» անձավային համակարգ, անձավային համակարգ | Արարատի մարզ, Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա |
| 4 | «Անանուն» շերտավոր նստվածքներ | Արարատի մարզ, Տիգրանաշեն-Պարոյր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա |
| 5 | «Անանուն» անտիկլինալ ծալք | Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարոյր Սևակ հատվածի 15-րդ կմ) |
| 6 | «Անանուն» ծալքավոր ստրուկտուրա | Արարատի մարզ, Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-պարոյր Սևակ հատվածի 15-րդ կմ) |
| 7 | «Անանուն» ծալքագոյացման մերկացում | Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեդի գետի աջ ափին |
| 8 | «Հորթունի» բրածո ֆլորա | Արարատի մարզ, Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ |
| 9 | «Զերմանիսի» բրածո ֆլորա | Արարատի մարզ, Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Զերմանիս գյուղատեղիի մոտակայքում |
| 10 | «Վեդի գետի ավազանի» բրածո ֆաունա | Արարատի մարզ, Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ |
| | Կենսաբանական հուշարձան | |
| 1 | «Աղակալած ճահճուտ» | Արարատի մարզ, քաղ. Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության վրա |

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքում բնության, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ չկան:

4.2.8 Հատուկ պահպանվող տարածքներ

Արարատի մարզում են գտնվում բնության հատուկ պահպանվող տարածքներ՝ «Խոսրովի անտառ» պետական արգելոցը, «Գոռավանի ավազուտներ», «Խորվիրապ», «Գիլան» արգելավայրերը և 11 բնության հուշարձան:

Խոսրովի արգելոցը կազմավորվել է 1958 թ. Հարավային Հայաստանի բնական համալիրների պահպանման համար: Գտնվում է Գեղամա լեռնաշղթայի հարավային լեռնաճյուղի Գառնիի և Վեդի գետերի ավազանում: Մակերեսը 23213.5 հա է, որից անտառայինը՝ 9446 հա: Ռելիեֆը լեռնային է (բարձրությունը ծովի մակերևույթից 16003400 մ է) կտրտված է բազմաթիվ կիրճերով: Արգելոցի սահմաններում աճում են բարձրակարգ բույսերի 1849 տեսակ (Հայաստանի բուսականության տեսակային կազմի 60%-ը, որոնցից 146-ը գրանցված են «Կարմիր գրքում»: Կան հազվագյուտ և էնդեմիկ տեսակներ (24), օրինակ՝ հայկական ալրճենին, Վավիլովյան աշորան (տարեկան) և այլն: Արգելոցի տարածքում հանդիպում են 1500 անողնաշարավոր և 283 ողնաշարավոր կենդանիներ, որոնցից համապատասխանաբար 31-ը և 34-ը գրանցված են ՀՀ կենդանիների Կարմիր գրքում: 50-ը գրանցված են «կարմիր գրքում»: Թռչնաֆաունան մոտ 130 տեսակ է. դրանց թվում են՝ քարակազավը, սև անգղը, գառնանգղը, կարմրաթև մագլցողը և այլն: Կաթնասուններից կա 55 տեսակ, սողուններից՝ 30, երկկենցաղների 4 և ձկների 9 տեսակ:

Խոսրովի անտառ» պետական արգելոցը /ծովի մակերևույթից 1600-2300մ բարձրության վրա/, որը հիմնել է Արշակունի Խոսրով Բ Կոտակ թագավորը՝ 330-338թթ-ին: Խոսրովի արգելոցի տարացքում կան հայկական ճարտարապետության բազմաթիվ հուշարձաններ, պատմական կառույցների փլատակներ:

«Գոռավանի ավազուտներ» արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, զբաղեցնում է Արարատյան գոգավորության նախալեռնային թեք հարթությունները, Վեդի քաղաքի հարավային մասը՝ Գոռավան գյուղի մոտ, Վեդի գետի միջին հոսանքի ձախափնյա տարածքները, ծովի մակերևույթից 1100-1200 մետր բարձրության վրա. «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտներն ավազային անապատին յուրահատուկ կենդանական աշխարհն ու ավազասեր բուսականությունն են:

«Խոր Վիրապ» արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, Արարատի հարթավայրում. Խոր վիրապ եկեղեցական համալիրի հարևանությամբ, Արտաշատ հնագույն քաղաքի մոտ, ծովի մակերևույթից 815.8-887 մետր բարձրության վրա: «Խոր Վիրապ» պետական արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտները մերձարաքսյան խոնավ տարածքի էկոհամակարգի յուրահատուկ կենդանական աշխարհն ու ջրաճահճային բուսականությունն են:

«Գիլան» արգելավայրը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզում, Գեղամա լեռնաշղթայի հարավային լանջերին, ծովի մակերևույթից 1330-1400 մետր բարձրության վրա:

Մարզում հատուկ պահպանվող տարածքները կազմում է ընդհանուր հողատարածքի 13,8%-ը:

Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքում բացակայում են հատուկ պահպանվող տարածքները:

4.2.9 Սոցիալ-տնտեսական

Համաձայն ՀՀ վիճակագրության կայք էջի՝ ՀՀ Արարատի մարզի տարածքը կազմում է 2090քառ.կմ: բնակչությունը կազմում է 259,3 հազ. մարդ, ՀՀ բնակչության 8,7%-ը: Բնակչությունը հիմնականում միատարր է, ապրում են նաև ռուսներ, քրդեր, ասորիներ: Բնակելի տարածքները հիմնականում տեղակայված են հարթավայրային գոտում: Մարզի ամենախոշոր քաղաքը Արտաշատն է, որը գտնվում է Երևան-Գորիս-Ստեփանակերտ ավտոմայրուղու վրա Երևան քաղաքից 10կմ հեռավորության վրա: Մարզն ունի զարգացած տնտեսություն, առավել հայտնի է որպես ծանր արդյունաբերության կենտրոն, այստեղ են գտնվում ցեմենտի գործարանը և ոսկու կորզման ֆաբրիկան, առկա են 103 արտադրական ձեռնարկություններ, շինարարական կազմակերպություններ, 112 հանրակրթական դպրոցներ, մանկապարտեզներ, համայնքային ենթակայության երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, մշակույթի տներ, 1 պետական դրամատիկական թատրոն, 2 տուն-թանգարան, 4 բժշկական կենտրոններ, 1 ծննդատուն, 1 առողջության կենտրոն, բուժամբուլատորիաներ:

| | |
|--|---------------------------------|
| Տարածքը Territory | 2 090 քառ. կմ/ sq. km |
| Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the marz in the territory of the Republic of Armenia, % | 7.0 |
| Համայնքներ, 2023թ. տարեկզբի դրությամբ Communities, as of the beginning of 2023 | 5 |
| Քաղաքներ Towns | 4 |
| Գյուղեր Villages | 95 |
| Բնակչության թվաքանակը 2023թ. տարեկզբի դրությամբ Population number as of the beginning of the year, 2023 | 259.3 հազ. մարդ/ ths. person |
| <i>այդ թվում՝</i> <i>including:</i> | |
| Քաղաքային Urban | 72.3 հազ. մարդ/ ths. person |
| Գյուղական rural | 187.0 հազ. մարդ/ ths. person |
| Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022 թ., % Share of marz population in the total population of the Republic of Armenia 2022, % | 8.7 |
| Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022 թ., % Share of urban population size 2022, % | 27.9 |
| Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land | 156 020.4 հա/ ha |
| այդ թվում՝ վարելահողեր including: arable land | 24 130.8 հա/ ha |

Մարզն հարուստ է տեսարժան վայրերով՝ Արտաշատ, Դվին, Խոր Վիրապ, Կաքավաբերդ, Հովհաննես-Կարապետ, Ստեփանոս, Վիշապաքարեր: Ունի հարուստ բնաաշխարհ՝ Արարատ, Գեղամա լեռներ, Խոսրովի անտառ:

Համաձայն վիճակագրության ծառայության տվյալների՝ 2022թ.-ին Արարատի մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

Աղյուսակ 7.

| | |
|--------------------|-------|
| Արդյունաբերություն | 11.2% |
| Գյուղատնտեսություն | 14.7% |
| Շինարարություն | 5.8% |
| Մանրածախ առևտուր | 3.8% |
| Ծառայություններ | 1,6% |

Տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է, որը հիմնականում մասնագիտացած է խաղողագործության, պտղաբուծության և բանջարաբուծության մեջ: Առաջատար տեղ է զբաղեցնում ձկնարդյունաբերությունը, առկա է 157 ձկնաբուծական տնտեսություն: Հարուստ է օգտակար հանածոներով՝ տրավերտինի, կավերի, կրաքարի, ավազի, ավազակոպճային խառնուրդի, օնիքսանման մարմարների, մարմարացված կրաքարերի, բազալտի, միկրոբերեկչիանների հանքավայրերով: Արտաշատը զարգացած է գինու, մրգի պահածոների, հախճապակու, խեցեգործական իրերի արտադրության ուղղությամբ: Մասիսին և Վեդուն բնորոշ են սննդի և թեթև արդյունաբերության ճյուղերը: Մասիսը նաև խոշոր երկաթուղային ապրանքային կայարան է, որն ունի միջմարզային նշանակություն:

Մարզն ապահովված է բջջային հեռախոսակապով և շարժական ինտերնետ կապով: Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ծխախոտային արտադրատեսակների, խմիչքների արտադրություններն են, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունն այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը: Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

Մասիս համայնք. Համաձայն 2022-2026թթ. Մասիս համայնքի զարգացման ծրագրի՝ Մասիս բազմաբնկավայր համայնքը կազմավորվել է 2021թ. դեկտեմբերի 5-ին՝ Արարատի մարզում կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքում: ՀՀ Արարատի մարզի Մասիս խոշորացված համայնքն իր մեջ ներառում է՝ ք. Մասիս, Ագատաշեն, Այնթապ, Արբաթ, Արգավանդ, Արևաբույր, Գեղանիստ, Գետափնյա, Դաշտավան, Դարակերտ, Դարբնիկ, Զորակ, Խաչփար, Հայանիստ, Հովտաշատ, Ղուկասավան, Մարմարաշեն, Նիզամի, Նոր

Խարբերդ, Նոր Կյուրին, Նորաբաց, Նորամարգ, Ջրահովիտ, Ռանչպար, Սայաթ Նովա, Սիս, Սիփանիկ (թվով 27 բնակավայր):

Համաձայն Մասիս համայնքի էլեկտրոնային էջի՝ <https://masiscity.am/> Մասիս քաղաքը գտնվում է Արարատյան դաշտի կենտրոնական մասում՝ Հրազդան գետի ստորին հոսանքի ձախ ափին՝ Արարատի մարզի հյուսիսում: Հյուսիսից սահմանակից է Արարատի մարզի Այնթապ, Նոր Խարբերդ, արևմուտքից՝ Սայաթ-Նովա, հարավից՝ Նորամարգ, արևելքից՝ Մարմարաշեն, Նոր Կյուրին համայնքներին, Հյուսիսից և արևելքից՝ Երևան քաղաքին, Հյուսիս-արևմուտքից՝ Արմավիրի մարզի Փարաքար և Վաղարշապատ համայնքներին: Համայնքի վարչական տարածքը կազմում է 16929,083 հա, 2022թ. հունվարի 1-ի դրությամբ մշտական բնակչությունը կազմում է 92623 մարդ, որի 97,7%-ը հայեր են, մնացածը՝ ռուսներ և եզդիներ: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 9807,97հա: Ծովի մակարդակից գտնվում է 830 մ բարձրության վրա: Հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 17կմ, մարզկենտրոն Արտաշատից՝ 20կմ դեպի արևմուտք, պետական սահմանից ուղիղ գծով՝ 8կմ: Համայնքը գազիֆիկացված է, առկա են բոլոր ենթակառուցվածքները, համայնքի տարածքով են անցնում միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհները: Մասիս համայնքում առկա են 33, հանրակրթական դպրոցներ, 26 նախադպրոցական հիմնարկներ, մշակութային տներ կամ ակումբներ, 1 հիվանդանոց, պոլիկլինիկաներ, բժշկական կենտրոններ, առևտրի, հասարակական և սպասարկաման ոլորտի օբյեկտներ: Քաղաքում է գտնվում ժամանցային մարզահամալիրը, լողավազաններ: Համայնքի տարածքում գործում են դիզելային շարժիչների վերանորոգման, գորգագործության, տրիկոտաժի և վարագույրների, տարաներ արտադրող, ծխախոտի, գինու և կոնյակի, պահածոների, փայտամշակման գործարաններ, նավթամթերքի բազան, ֆինանսական հաստատությունների մասնաճյուղեր և այլն: Ունենալով նպաստավոր բնակլիմայական պայմաններ, աշխարհագրական դիրք(խոշոր երկաթուղային ապրանքային կայարան է), ոռոգման ցանցի առկայություն, համայնքում զարգացած է գյուղատնտեսությունը, որի առաջատար ճյուղերն են բանջարաբուծությունը, պտղաբուծությունը, հացազգիների մշակումը և անասնապահությունը: Համայնքում առաջընթաց է ապրում ինտենսիվ այգիների, ջերմոցային, սառնարանային տնտեսությունների զարգացումը, ավելանում է ֆոտովոլտային արևակայանների թիվը:

Համայնքի որոշ բնակավայրեր հայտնի են իրենց հնավայրերով, մասնավորապես Հայանիստ բնակավայրի տարածքում՝ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի «Ոսկե բլուր» բնակատեղին, Արգավանդ բնակավայրի տարածքում՝ 5-6-րդ դարերում Սուրբ Հարություն եկեղեցու, հին գերեզմանոցի տարածքում՝ 4-5-րդ դարերի Թուփ Մանուկ եկեղեցու ավերակները , 15-րդ դարի թուրքմենական ամիրաների դամբարանը և այլն:

Մասիս քաղաքն ունի երկու նորակառույց եկեղեցի, Սբ. Թադևոս և Սբ. Գևորգ եկեղեցիները: Նշված հնավայրերի առկայությունը բարենպաստ պայմաններ են ստեղծում զբոսաշրջության զարգացման համար:

Համայնքի տարածքով է հոսում Հրազդան գետը, հարավում՝ պետական սահմանի երկարությամբ՝ Արաքս գետը: Համայնքում բացակայում են անտառային տարածքները:

Արգավանդ բնակավայրը գտնվում է Մասիս քաղաքից 13կմ հյուսիս՝ Երևան-Վաղարշապատ խճուղու վրա, մարզկենտրոնից՝ 27 կմ հեռավորության վրա: Բնակավայրում գործում են դպրոց, գրադարան, մանկապարտեզ, բուժկետ: Բնակչությունը հիմնականում զբաղվում է գյուղատնտեսությամբ՝ այգեգործությամբ, բանջարանաբոստանային կուլտուրաների մշակմամբ, մեղվաբուծությամբ: Գյուղում բացակայում են արոտավայրերը, չկան արդյունաբերական արտադրություններ:

Մարզի և համայնքի բնապահպանական և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներից է՝ մաքրման կայանների բացակայությունը, թափոնների տարերայնորեն տեղադրումը, անկանոն աղբահանությունը, հողերի դեգրադացիայի կանխումը, աղակալած հողատարածքների վերականգնումը, կենսաբազմազանության պահպանումը, կանաչ տարածքների բացակայությունը, գործազրկության բարձր մակարդակը, նոր աշխատատեղերի բացումը, ենթակառուցվածքների, ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի բարելավումը, աղբատության շեմի նվազումը և այլն:

Այնթապ բնակավայր. գյուղը գտնվում է Երևան քաղաքից հարավ-արևելք, մարզկենտրոնից՝ 25 կմ հեռավորության վրա, զբաղեցնում է 8.8 կմ² մակերես: Բնակավայրը վերանվանվել է Այնթապ՝ ի հիշատակ Կիլիկիայի համանուն քաղաքի: Գյուղը տեղակայված է Արարատյան դաշտում՝ ծովի մակարդակից 865 մ բարձրության վրա: Կլիման չոր, խիստ ցամաքային է ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26, իսկ առավելագույնը՝ 42: Հաճախ լինում են խորշակներ, որոնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը կազմում է 250-300 մմ: Բնական լանդշաֆտները կիսաանապատներ են, որոնք ոռոգման ընթացքում վերածվել են կուլտուր-ոռոգելի լանդշաֆտի:

Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ոռոգման գոտում: Բնակչությունը զբաղվում է բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ և այգեգործությամբ՝ սեփական տարածքում աճեցնում են ցորեն և տարբեր բանջարաբոստանային կուլտուրաներ, որոնց իրացումը հաճախ դժվարությամբ կատարվում է մայրաքաղաքում: Գյուղատնտեսությունում զգալի մաս է կազմում նաև անասնապահությունը:

Գյուղն ունեցել է մի եկեղեցի՝ սուրբ Գրիգոր, որին կից գործում էր փոքր վարժարանը (Նորագեղ, Թազագյուղ): 973թ. կանգնեցվել է Երկրորդ Աշխարհամարտում զոհվածներին նվիրված հուշարձանը: Բնակչության թիվը 2023թ. հունվարի 1-ը դրությամբ կազմում է 2017 մարդ:

Ունի միջնակարգ դպրոց/2 հատ/, մանկապարտեզ, մշակույթի տուն, էերկհարկանի բուժամբուլատորիա, գազիֆիկցված է: Գյուղում առկա են հիմնականում սեփական տներ ,չկան բարձրահարկ և ցածրահարկ շենքեր:

Հիմնախնդիրներից է կոյուղու, ոռոգման համակարգի, աղբարկղերի, շուրջօրյա ջրամատակարարման բացակայությունը, գյուղտեխնիկայով ապահավվածություն չունի:Ներհամայնքային առուները հողային են, որոնք կարիք ունեն մաքրման և խողավակների տեղադրման, ճանապարհների հասարակական նշանակության շինությունների վերանորոգումը:

5. Նախատեսվող գործունեության բնութագիրը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, (շինարարության շահագործման , փակման փուլեր).

5.1 Շինարարության փուլ.

Կառուցապատման նպատակով կատարվելու են շինարարական աշխատանքներ: Տարածքում արդեն կատարվել են նախապատրաստական աշխատանքները, քանդման աշխատանք չի նախատեսվում:

Շինարարության փուլում նախատեսվում է հետևյալ շինարարական աշխատանքները.

- շինարարական հրապարակի կազմակերպում,
- հողային աշխատանքներ,
- հիմնային աշխատանքներ,
- հավաքովի մետաղակարկասի իրականացում,
- տանիքի իրականացում,
- ինժեներական կոմունիկացիաների կազմակերպում,
- հարդարման, բարեկարգման աշխատանքների իրականացում և այլն:

5.2 Շինարարական հրապարակ.

Առևտրի սրահի շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվող շինարարական հրապարակ է ամբողջ տարածքը:

Շինարարական հրապարակում լինելու են.


- գրասենյակ 1 հատ
- հանդերձարան 1 հատ
- ճաշարան՝ 1հատ
- հագուստի չորանոց՝ 1հատ
- լոգարան՝1 հատ
- բիոզուգարան 2 հատ
- աղբի տարաներ 2 հատ
- լուսարձակներ 9 հատ
- պահակատուն 1 հատ
- հակահրդեհային վահանակ 1 հատ
- մեքենաների անիվների լվացման հարթակ՝ 1 հատ 8,0x3,5 մ չափերի:

Շինհրապարակում նախատեսված է շինարարական աղբի պահման տարածքը:

Շինհրապարակի կազմակերպման հատակագիծը

Գծապակեր 1,2,3


ՇԻՆ. ԳՐԱԴԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԳՈՐԱՑԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՓՈԼՈՒՄ Ս1:500



| | | | |
|--|--|---------------|---|
|  | Ձև. ճարտարութեան | Ս. ԲԱՐՍԵՂՅԱՆ | ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ ՄԱՐԿԱՆԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ, ԳՈՐԱՄԱՍ, ԳՈՐԱՄԱՍ, ԳՈՐԱՄԱՍ, ԳՈՐԱՄԱՍ 10/1 ԳՈՐԱՄԱՍԻ ՄԱՅՐՈՒՂ |
| | ճարտարութեան | Է. ԵՐԱՊՈՒՆՅԱՆ | |
| | *ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ՝ ՄԻՋ ՏՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ Վ. ԳՐԱԿԱՆԱԿԱՆ Վ. | | ԵՆ. ԳՐԱԴԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԳՈՐԱՑԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՓՈԼՈՒՄ Ս1:500 |
| | | | ԹՈՒՆ ԵԿ ԹԵՐԵՐ 3 ԹԵՐԵՐ 7 |

ՇԻՆ. ԳՐԱԴԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:500


Կառուցադասարկող ՊՐԱՄԱՍ
ՄԱՐԻ ԱՐԱՐԱՏ
ՀԱՄԱՅՆԵ ՄԱՍԻ, ԳՅՈՒՂ ԱՅՆԹԱԴՊ
ԵՐԵՎԱՆ-ՄԵՂՐԻ ՄԱՅՐՈՒՐԻ
10/1 ՊՐԱՄԱՍ
ԾԱԾԿԱԳԻՐ 03-012-0238-0018



1. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱԿԻ ԳՈՏԿՈՐՈՂ ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՄԵՏԱՐԵ ԿԱՀԱՄԱԿԱՑԻՆ ՊԱՆԵՇԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԵՎԱՑՈՂ ԿԱՅՐՈՒՄ ԱՎ ՀՐԱԾԵՇՏ Է ՓԱԿՑՆԵԼ ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՄԱՐ ՀԱՄԱՉԱՑՆ ԵՐԵՎԱՆԻ ԱԿԱԿՆՈՒ 16.03.2012թ. N 405-Ն ՈՐՈՇՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ:

| | | | | | | | |
|--|-----------------|----------------|--|--|--|------|--------|
| | ԳԱՆ. ԾԱՐՏԱՐԱՐԵՏ | Ա. ԲԱՐԱՍՄԱՐՅԱՆ | | ՄՈՒՆԿՐԻ ՄՐԱՅԻ ԼՆԻՍԱԳԻԾ | | | |
| | ԾԱՐՏԱՐԱՐԵՏ | Է. ԾԱԳՊՈՒՆՅԱՆ | | | ՄԱՐԻ ԱՐԱՐԱՏ, ՀԱՄԱՅՆԵ ՄԱՍԻ, ԳՅՈՒՂ ԱՅՆԹԱԴՊ, ԵՐԵՎԱՆ-ՄԵՂՐԻ ՄԱՅՐՈՒՐԻ, ՊՐԱՄԱՍ 10/1 ՊԱՏԿՈՒՑՈՒՄ ԱՐԱՄԱՅԱՆ | | |
| | | | | ՇԻՆ. ԳՐԱԴԱՐԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ1:500 | ՓՈՒԼ | ԹԵՂԹ | ԹԵՂԹԵՐ |
| | | | | | ԵԿ | 4 | 7 |

ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՏԵՂԱԴՐԿՈՂ ՄԵՏԱՂԵ ՎԱՅԱՆԱԿԱՅԻՆ ՊԱՏՆԵՇ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԵՇԱՆԱԿՈՒՄ

| | |
|--|---|
| | ԿԱՌՈՒՅՎՈՐ ԸՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ |
| | ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՏՆԱԿԱՐԱՆԵՐ |
| | ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ԴԵՏԻՈՏՆ ԱՆՎՏԱՆԳ ՃԱՆՊԱՐԳ |
| | ԼՈՒՄԱՐՁԱԿՆԵՐ |
| | ԿՈՒՐԿԻ ԱՇԽԱՏԱԼԻ ԿՏԱԴԱԿՈՐ ԱՆՐԱՆԱԳԻԾ |
| | ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՏԵՂԱԴՐԿՈՂ ՄԵՏԱՂԵ ՎԱՅԱՆԱԿԱՅԻՆ ՊԱՏՆԵՇ |
| | ԸՆ. ԳՐԱՄԱՐԱԿ ՄՈՒՅԵ ԵՎ ԵԼ |

ԱՆԿՏԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀՐԱՀԱՆԳ

1. ԱՆՍՊԱՏՈՒՄՆԵՐ ԵՆ ԱՍՈՒԽՆԵՐԻ ՄԻՋՅԱՆ ՎԱՅԱՆԱԿ ԸՍՏ ԸՆԿԱՐԱՐԱԿԱՆ ՄԵԽԱՆՈՒՄՆԵՐԻ ՊԱՅԱՆԱԿՈՒ ԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ:
 2. ԿՈՒՐԿԻ ԴԵՏ ԱՇԽԱՏՈՂ ԱՇԽԱՏԱԿԱՅԻՆ ԸՆԿՈՒԹՅԱՆ ՏՎՈՒՄ ԿՈՒՐԿԻ ԴԵՏ ԱՇԽԱՏԱՆԻ ԱՆՎՏԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՒՆԵՐԻ՝ ԱՏՈՐԳՈՒԹՅԱՐ:
 3. ԿՈՒՐԿԻ ԱՇԽԱՏԱՆԸ ԹՈՒՅԱՏՐԵԼ ՄԻՋՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉՆԱՆՆԵՐ ԵՎ ԱՆՎՏԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՋԵՆԵՐԻ ԿՈՐԱՅԻ ՏՐՎԱԾ ԹՈՒՅԱՆՎՈՒԹՅՈՒՆՑ ԴԵՏՈՒ:
 4. ԸՆԿԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆՏԱՆԱԿ ԱՆԳՐԱԾԵՑ Է ԿԱՉՄԱԿԵՐՊԵԼ ԱՆՎՏԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՅԱՆՈՒԹՅԱՆ:
- ԱՇԽԱՏԱՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ 1.3 ՄԵՏԻ ԵՎ ԱՎԵԼԻ ՏԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՂՈՒՄ,
 - ԲԱՐՁՐ ՏԵՂԱԴՐՎԱԾ ԿՈՆՏՐՈՒԿՑԻՍՆԵՐԻ, ԼՅՈՒԹԵՐԻ, ԳՈՐԾԻՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԻՑ,
 - ՄԵՇԵԼՆԵՐԻ ԸՄՈՒՄԱՆ ՄԱՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՆՑՈՎ ՏԵՂԱՇՐՈՒՂ ԿՈՆՏՐՈՒԿՑԻՍՆԵՐԻ ԵՎ ԼՅՈՒԹԵՐԻ ԱՆԿՈՒՄԻՑ,
 - ԸՆԼՅՈՒ ԵՎ ԸՆԿՈՒԹՅԱՆ ՉԱՏՐԱՑՎԱԾ ԿՈՆՏՐՈՒԿՑԻՍՆԵՐԻ ՓՈՒԻՉՈՒՄԻՑ,
 - ՄԵՇԵԼՆԵՐԻ ՄԱՆԵՐԻ ԱՆԿՈՒՄԻՑ,
 - ԱՇԽԱՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿ ՎԱՅԱՆԱԿՈՐ ԼՅՈՒԹԵՐՈՎ ԱՇԽԱՏԵԼԻ ԱՆՎՏԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՒՄԱՆ ՀԱՄԱՐ,
 - ԱՇԽԱՏԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆԳՐԱԾԵՑ ԼՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԿՈՆՏՐՈՒԿՑԻՍՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆԵՐԻՈՒՄ ՃԻՏ ԴԱՍԱԿՈՒՒԹՅՈՒՆԸ,
 - ԱՇԽԱՏԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏԻՍԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԻ ԱՌԵԼՈՎ ԿՈՆՏՐՈՒԿՑԻՍՆԵՐԻ ԿԱՅՈՐ ՏԵՂԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ,
 - ԿՈՆՏՐՈՒԿՑԻՍՆԵՐԻ ԵՎ ԸՆԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՊԱՅՈՒՄԵԼ ՄԻՋՅԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՆԵՐԻ ՑԱԾ ԸՇԿԱԵԼՈՒ ԵՎ ԼՐԱՆՑ ԿՈՐԱՅԻ ԻՐԵՐԻ ԸՇԿԱԵԼՈՒ ՎՏԱԿԻ ԴԵՄ ՀԱՄԱՊԱՏԱՆԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՄԻՆ ԿՈՆՏՐՈՒԿՑԻՍՆԵՐԻ ԻՐԱՎԱՆՑԵԼՈՒ:
 - ԸԵԳՐՏԵԼ ԿՈՒՐԿԻ ՄԱԿԻՇԸ, ԼՐԱ ՏԵՂԱՐՄԱՆ ՎԱՅՈՐ ԵՎ ԼՐԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎՏԱԿԱԿՈՐ ԳՈՏԻ ԼԵՂԱՐԵԼ ԴՈՒՆՎԵՐՈՎ, ԹՈՒՅԱՆՎԵՐՈՎ ԵՎ ԱՅԼ ՄԻՋՅԱՆԵՐՈՎ,
 - ՄՈՒՂԱԿԵԼ ԱՇԽԱՏԱՆԵՐԻ ԱՆՎՏԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ԿՐԱ,
 - ԸՇԵՏԵԼ ՏԵՂԱԴՐՈՂ ԿՈՆՏՐՈՒԿՑԻՍՆԵՐԻ ՀԱՅՈՐՄԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ,
 - ՄՈՆԻՏՈՐԱՆ ԸՆԹՅԱՑՈՒՄ ՄՈՒՂԱԿԵԼ ԿՈՆՏՐՈՒԿՑԻՍՆԵՐԻ ԵՎ ԸՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՒԹՅՈՒՆԸ:

ԸՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

| № | ԱՆՎԱՆՈՒՄ | ՉԱՓ. ՄԻՈՎ | ՔԱՆ. | ԾԱՆՈՒԹՅՈՒՆ |
|----|-------------------|-----------|------|------------------|
| 1 | ԳՐԱՅԵԼՁԱԿ | ՀԱՏ | 1 | |
| 2 | ՀԱՆԵՐՁԱՐՄԱՆ | ՀԱՏ | 1 | |
| 3 | ՀԱԳՈՒՄՏԻ ԳՈՐԱՆՈՑ | ՀԱՏ | 1 | |
| 4 | ՃԱՇԱՐԱՆ | ՀԱՏ | 1 | ՊԱՏՐԱՄՏԻ ԱՆՈՒՂՈՒ |
| 5 | ԼՈՒՄԱՐԱՆ | ՀԱՏ | 1 | |
| 6 | ԲՈՒ ՉՈՒԳԱՐԱՆ | ՀԱՏ | 2 | |
| 7 | ՄՐԻՑ ՏԱՐԱՆԵՐ | ՀԱՏ | 2 | |
| 8 | ԼՈՒՄԱՐՁԱԿՆԵՐ | ՀԱՏ | 3 | ՈՐՄ - 20 |
| 9 | ՀԱԿԱՐԴԵՅ. ՎԱՅԱՆԱԿ | ՀԱՏ | 1 | |
| 10 | ՊԱՅԱՆԱԿԱՆՑ | ՀԱՏ | 1 | |

| | | | | | | | |
|--|---|----------------|--|------------------------|--|----------------------|------|
| | ԳԼՆ. ՃԱՐՏԱՐԱՊԵՏ | Ա. ԲԱՐՅԱՆՅԱՆ | | ԱՆԵՎՏՐԻ ՄՈՐԱԳԻ ԱՆՍԱԳԻԾ | | | |
| | ՃԱՐՏԱՐԱՊԵՏ | Է. ԸՆԳՂԱՐՈՆՅԱՆ | | | ՄԱՐԶ ՄՈՐԱՐԱՏ, ՀԱՄԱՅԱԵ ՄԱՍԻՍ, ԳՅՈՒՐ ԱՅՆԹԱՊ, ԵՐԵՎԱՆ-ՄԵՐԻ ՄԱՅՐՈՒՂԻ, ՀՈՐԱՄԱՆ 10/1 ՊԱՏ-ԻՐԱՏՈՒՄ ԱՐԱՄ ԱՐԱՄՅԱՆ | | |
| | | | | | | ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԼԵՍԱԿՈՒՄ, | ՓՈՒԼ |
| | "ԱՏՈՆՅԱՆ ԱՆՍԱԳԻԾ" ՄՈՐ ՏՈՐԵԼ Ժ. ՀՈՒՅՆԻՍՅԱՆ | | | ԸՎ | 5 | 7 | |

Շինարարության ժամանակ նախատեսվող ժամանակավոր պահեստներն, ինչպես նաև աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, հանդերձարանը, գրասենյակը, պահակատունը տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վազոն տնակներում:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում՝ 1հատ 8,0x3,5 մ չափերի լվացման սարքի միջոցով: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև շինարարական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային՝ ջրահեռացման ցանցով և լցվելու են բիոզուգարաններ: Անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով, բակային սելավային ջրացանցի միջոցով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 1,1մ³ չափերի պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ շին. հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադբ:

Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր մետաղական վահանակային պատնեշով, դարպասով: Պատնեշի արտաքին մասում տեղադրվելու է տեղեկատվական պաստառ: Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ:

Բոլոր տիպի շին-մոնտաժային աշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինհրապարակն ապահովվելու է էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները:

Ելնելով առկա պայմաններից շինարարության փուլում նախատեսվում են անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ, հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

Հողային աշխատանքներ. Կառուցապատման ժամանակ կատարվելու են 2860մ³ ծավալի հողային աշխատանքներ՝ Հողային զանգվածն առաջանալու է շենքի հիմքերի փորման և ամրացման, ժամանակավոր կառույցների տեղադրման, ջրամատակարարման և ջրահեռացման, հրդեհաշիջման, էներգամատակարարման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Հողային գրունտը կպահպանվի տարածքում և կօգտագործվի տարածքի հարթեցման համար: Հողային աշխատանքների ժամանակ առաջանալու է 120մ³ ծավալով բերրի հող, որը օրենքով սահմանված կարգով պահվելու է տարածքում, հետո օգտագործվի կանաչապատման նպատակով:

Հողային և հիմնային, տանիքի, հատակների հարդարման, ինչպես նաև լրող և պատող կոնստրուկցիաների շին մոնտաժային աշխատանքները կատարվելու են համաձայն աշխատանքային նախագծի՝ ՇՆուԿ 3.02.02.-87-ի և ՇՆուԿՈՒ-4-81-ի պահանջներին համապատասխան:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, շինարարական աշխատանքներ. գործունեության կատարման շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

- Ավտովերամբարձ կռունկ КС-65713-1, Галичанин, կամ տվյալ տեսակին համարժեք տեխնիկաան տվյալներով
- Բեռնատար ինքնաթափ МА3 5550, կամ համարժեք տեխնիկական տվյալներով-
- Բեռնատար ավտոբետոնախառնիչ СБ-69Б
- Բուդոզեր KOMATSU D37-EX-22, կամ համարժեք տեխնիկական տվյալներով
- Էքսկավատոր Hyundai 170W, կամ համարժեք տեխնիկական տվյալներով-
- Շարժական կոմպրեսոր ЗИФ - 55 В
- Էլ, եռակցման սարք СТН 500 կամ նրան համարժեք
- Ձեռքի էլեկտրական գործիքներ
- Ձեռքի մեխանիկական գործիքներ
- Ատաղձագործական գործիքներ
- Ներկարարական գործիքներ:

Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին: Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 5⁰ -ից ոչ ավել թեքություն:

Շինտեխնիկական լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկական կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաներն աշխատելու են ըստ հերթականության և ըստ անհրաժեշտության: Աշխատող մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ շինհրապարակում: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Կառուցապատման բոլոր լուծումների համար հաշվի են առնվելու տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր միջոցառումներ՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝

տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից: Ակտավորվելու են թաքնված աշխատանքները, գրանցելով վարման մատյանում:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ՝ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

Էլեկտրամատակարարում. Առևտրի սրահի շինարարության ընթացքում էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «ՀԷՏ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի:

Հրդեհաշիջման համակարգ. շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվելու են «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին»-ի կողմից տրված հրահանգներով: Շինարարական հրապարակում տեղադրվելու է 2 հրդեհաշիջման վահանակ՝ դարպասների մոտ, յուրաքանչյուրի վրա հակահրդեհային կրակմարիչներով և հիդրատներով: Շինարարության փուլում տեղադրվելու է նաև 10 տոննա տարողության ջրի բաք՝ հրդեհամարման, ջրցանի նպատակով:

Աղբահեռացում. շինարարության ընթացքում առաջանալու են շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով՝ մոտ 250մ³ ծավալով: Շինաղբի կուտակումը կատարվելու է շինհրապարակում նախատեսված վայրում՝ պարկերի մեջ, չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը:

Կենցաղային աղբը կառուցապատման փուլում կազմելու է 2400կգ/տարի: Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 1.5*2 չափերի 2 աղբարկղ:

Շինարարության փուլում աղբահեռացումը կարգավորվելու է Մասիսի համայնքապետարանի կողմից տրված տեղեկանքի պահանջին համապատասխան /գտնվում է տրամադրման փուլում, լրացուցիչ կներկայացվի/:

Սոցիալական. Շինարարության փուլում ներգրավվելու են մոտ 20աշխատող, որից.

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 2 մարդ
- Արհեստագործներ և բանվորներ - 14 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ - 4 մարդ

Կանաչապատում. շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի բարեկարգում և կանաչապատում՝ 1047մ² մակերեսով: Կանաչապատումը կատարվելու է գազրնի, ծաղկանոցի տեսքով և տնկվելու է 16 հատ կատալպա:

5.3 Ժամանակացույց

Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 24 ամիս՝ 2 տարի:

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II հիման վրա, հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը:

| | | ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|-------------------------|--|-------------------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--------|--|
| ԱՆԽԱՏԵՍԱԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ | | Ուսման | Ուսման | Ուսման | Ուսման | Ուսման | Ուսման | Ուսման | Ուսման | Ուսման | Ուսման | Ուսման | Ուսման | Ուսման | Ուսման | Ուսման | Ուսման | Ուսման | Ուսման | Ուսման | Ուսման | Ուսման | Ուսման | |
| 1 | Ցուրձերի անվտանգություն, բոլորձերի աշխատանքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | Բնակների ֆունկցիաների քաղաքացիական, բնակների բեռնաշարժ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | Բնակների մեքենայի վարչարարական աշխատանքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | Անվտանգության ցուցանիշների մասերի աշխատանքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 5 | Անվտանգության ցուցանիշների աշխատանքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 6 | Ցուրձերի աշխատանքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 7 | Ինժեներական կառուցվածքների կառուցվածքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8 | Բարձրագույն աշխատանքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 9 | Ցուրձերի արժեքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԿՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՒՄ Է 24 ԱՄԻՍ

6. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր

Բազմաֆունկցիոնալ առևտրի սրահի կառուցման շինարարության փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր, իսկ շահագործման փուլում ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով:

6.1 Ջուր.

Շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսակենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի(գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար:

Շինարարության փուլում աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի:

Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, համապատասխան լիցենզիա ունեցող անձանց կամ ընկերությունների կողմից: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 10 տ տարողության բաքի մեջ: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$W_{\text{Է.ի.}} = (n \times N + n1 \times N1) \times T$, որտեղ

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 4 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

$n1$ – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 16 մարդ

$N1$ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 624օր:

$W_{\text{խ.տ.}} = (4 \times 0.016 + 16 \times 0.025) \times 624 = 289.536$ մ³/շին. ժամ. կամ 0,464 մ³/օր:

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$U1 = S1 \times K1 \times T$, որտեղ՝

$S1$ – ջրվող տարածքի մակերեսը 840 մ², (շինհրապարակ, ճանապարհներ)

$K1$ – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 450 (առավելագույնը 450օր, ներառված կրկնակի ջրցանը)

$U1 = 840 \times 0.0015 \times 450 = 567$ մ³/շին. ժամ. կամ 1,26 մ³/օր:

Ընդամենը ջրի սպառումը շինարարության փուլում կլինի $1672,77\text{մ}^3/\text{շին}$. Ժամ կամ $2,449\text{ մ}^3/\text{օր}$:

Անիվների վազման համար Շինարարության փուլում մեքենաների վազումը նախատեսվում է օրը 2-3 հատ՝ 1 անգամ հաճախականությամբ:

Տեղադրվելու են 1 հատ վազման կետ, յուրաքանչյուրի ջրաքանակի նորման ընդունված է $0,8\text{լ/վրկ}$:

$$Q_2 = 0.8 \times 3 = 2.4\text{լ/վրկ}$$

Կեղտաջրեր. շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են գոյություն ունեցող՝ սանհանգույցներից կամ ժամանակավոր տեղադրվող 2 հատ բիոզուգարաններից՝ $1,5 \times 2$ չափերի: Շինաշխատանքների ավարտից դրանք ապամոնտաժվելու են:

Նյութեր. Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես.

- երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ
- ավազ
- բազալտ, տուֆ
- սրբատաշ և կոպտատաշ քար
- մետաղական թիթեղներ
- մետաղ, մետաղական կարկասներ
- ալյուկոբոնդ
- բարձրորակ երեսապատման սալիկներ
- ապակի՝ վիտրաժային պատուհաններ
- բարձրորակ սվաղ և ներկ:

Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել տրավերտինե՝ քարե սրբատաշ սալիկներով, այն համադրելով բազալտի և սև տուֆի համակցությամբ:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Միաձույլ ե/բ կոնստրուկցիաների բետոնալցման համար համապատասխան դասի բետոնը պատվիրվելու է մասնագիտացված բետոնային հանգույցներում: Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնամղիչով:

Շինաշխատանքերը կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված բոլոր

նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից՝ շինինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից:

Ձմռանը ներքին հարդարման և բետոնային աշխատանքները կատարվելու են հատուկ տաքացման պայմաններում:

Շին. հրապարակում շինանյութերը պահեստավորվելու են պահեստներում, իսկ բաց տարածքի դեպքում կտեղադրվեն տակդիրների վրա՝ չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

Առևտրի սրահն ապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով: Ապաստարանը ևս ապահովված է հակահրդեհային համակարգերով՝ ծխահեռացման և հրդեհաշիջման համակարգերով:

6.2 Շահագործման փուլ.

Նախատեսվում է կառուցել առևտրի սրահ, պահեստ, նախասրահ, սանհանգույց և աշխատասենյակ:

Առևտրի սրահի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.

1. Հողամասի ընդհանուր մակերեսը՝ 4500մ²(100%):
2. Ընդհանուր կառուցապատման մակերեսը՝ 3453.0մ²(77%), որից սալվածքը՝ 983.3մ² (22%):

2. Առևտրի սրահի կառուցապատման մակերեսը՝ 2469.7մ²

3. Պարզագույն թաքստոց՝ 208,9մ²

4. Հարկի մակերեսը՝ 2454.0մ², ընդհանուր հարկերի մակերեսը՝ 2662,9մ²

5. Կանաչապատման մակերեսը 1047 մ²(23%) և լրացուցիչ 94մ² ծաղկանոց՝ 570 հատ ծաղկամաններով տեղադրվելու են տարածքում:

6. Ընդհանուր մոտ՝ 50 ավտոկայանատեղի՝ բացօդյա:

Համաձայն Մասիսի համայնքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի՝ շինության թույլատրելի բարձրությունը 6,40մ, կառուցապատման մակերեսը՝ 76%, կանաչապատման մակերեսը՝ 10-20%, ինչը պահպանվում է նախագծով: Նախատեսվում է նաև ստորգետնյա ապաստարան՝ 208,9մ² մակերեսով, որն ապահովված է լինելու անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքներով և ֆունկցիաներով և կարող է ապահովել 80 մարդու միաժամանակյա ներկայություն:



Համաձայն նախագծային լուծումների՝ Առևտրի սրահի արտաքին առավելագույն չափերը կազմում են 81.20x31.09մ: 0.00 նիշից հաշված առևտրի սրահի առավելագույն բարձրությունը կազմում է 6.40մ: Նախատեսվում է կառուցել առևտրի սրահ, պահեստ (պահեստն իրենից ենթադրում է սառնարանային տարածք՝ մթերքները պահելու համար), նախասրահ, սանհանգույց, աշխատասենյակ, հաշմանդամների սանհանգույց, էլեկտրական վահանակի սենյակ, օժանդակ սենյակ և վերելակ: Հարկի բարձրությունը ամենացածր կետում 3.70 մ է, իսկ ամենաբարձր կետում 4.90 մ է, իսկ 5.9 ամենաբարձր կետն է: Առևտրի սրահում նախատեսվում է իրականացնել պարզագույն թաքստոց, որը իր մեջ ներառում է օժանդակ սենյակ, հաշմանդամների սանհանգույց, սանհանգույց, ջրի տարայի սենյակ, վերելակ և աստիճանավանդակ: Հարկի բարձրությունը 3.30մ է: Առևտրի սրահը նախատեսվում է իրականացնել հավաքովի մետաղական կարկասով, որը պետք է պարփակվի մետաղական ջերմամեկուսիչ սալերով, իսկ ճակատային մասերում իրականացվի նաև ալյուկոբոնդով երեսապատում: Տանիքը երկթեք է, արտաքին կազմակերպված ջրահեռացմամբ, իրականացված մետաղական թիթեղներով: Առևտրի սրահի կառուցապատման մակերեսը արտաքին պատի արտաքին եզրագծով կազմում է 2454.0ք.մ: Բակային տարածքում նախատեսվում է բարեկարգում և կանաչապատում: Կառուցապատման տոկոսը կազմում է 77%, իսկ կանաչապատման տոկոսը՝ 23%:

Շինությունների հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է համաձայն՝ ՀՀՇՆII-8.04.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա» շինարարական նորմերի, «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգների, ինչպես նաև փոշեհատիկային հրդեհաշիջման մոդուլների տեխնիկական անձնագրերի հիման վրա:

Առևտրի սրահի ջեռուցումը նախատեսված է անհատական էլեկտրական տաքացուցիչներով:

Նախագիծը մշակելիս հաշվի են առնվել ինչպես դիտարկվող տարածքի հատակագծի երկրաչափական ուրվագիծը, դիտարկվող և հարակից տարածքների գոյություն ունեցող կառուցապատումը, տեղանքի ռելիեֆային առանձնահատկություններն, այնպես էլ պատվիրատուի պահանջները:

Շահագործման առևտրի սրահն ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Տրանսպորտային մոտեցումներն ապահովվում են՝ Երևան–Մեղրի մայրուղուց և գյուղամիջյան ճանապարհից:

Շահագործման փուլում հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի:

Շենքն ապահովված է լինելու էվակուացիոն ելքերով:

Գազամատակարարում. չի նախատեսվում:

Ջերմամատակարարում և օդափոխություն. ջեռուցման ժամանակաշրջանի տևողությունը կազմելու է 155 օր: Շենքի ջերմամատակարարումը նախատեսված է տաք ջրամատակարարման և ջեռուցման անհատական էլեկտրական կաթսայից: Տաք ջրամատակարարման ներքին ցանցը կատարվելու է պոլիպրոպիլենային խողովակներով:

Օդափոխություն. շենքի օդափոխությունը կատարվելու է բնական օդատարներով, որոնք հորանների միջով բարձրանում են դեպի տանիք:

Ծխահեռացման օդամուղները տեղակայված են տանիքի վրա: Շենքում նախատեսված են ներածման և ծխի արտածման համակարգեր:

Ջրամատակարարում- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը միանալու են համայնքի համապատասխան համակարգերին համաձայն՝ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից կնքված պայմանագրի: Ջրամատակարարման և ջրահեռացման համար «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի հետ կնքվել է ապայմանագիր, համաձայն որի իրականացվելու է առևտրի սրահի ջրամատակարարումը: Ջրամատակարարումը և ջրահեռացումը կատարվելու է հաշվառքի սարքի միջոցով համաձայն՝ պայմանագրի 4-րդ բաժնի 8.9.10 կետերին համապատասխան: Նախագծային լուծումների համաձայն շենքի ջրամատակարարման համակարգը փակուղային է և ստորին բաշխման՝ պոմպերի միջոցով: Իրականացվել է հրդեհաշիջման համակարգ, որը նախատեսված է հակահրդեհային պոմպերի միջոցով: Նախատեսված է ջրի ռեզերվուար իր անձեռնմխելի հրդեհաշիջման պաշարով: Մուտքագծի վրա նախատեսվում է ջրաչափական հանգույց: Շենքի

ներքին սառը ջրամատակարարման ցանցը իրականացվում է պոլիպրոպիլենային de20-25մմ և պողպատե 76-169մմ տրամաչափի խողովակներով:

Հավելված 5

Կենցաղային կոյուղի. շահագործման փուլում կենցաղային կոյուղաջրերն ինքնահոս հեռացվելու են դեպի համայնքային կոյուղու ցանց:

Էներգամատակարարում. Էներգամատակարարումը կատարվելու է համաձայն «ՀԷՑ»ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի՝ 250կՎԱ պահնաջվող հզորությամբ: Ցանցի սնումը 10կՎ լարման է: Նախատեսվում է տեղադրել 250կՎԱ հզորության 10/0,4կՎ տրանսֆորմատորային ենթակայն: Սնումն իրականացվում է «Խարբերդ» 110/10կՎ ե/կ-ից սնվող «Այնթափ» 10կՎ օդային գծի թիվ 198 հենարանից՝ ճյուղավորումով, կառուցելով մոտ 200մ երկարության 10կՎ էլեկտրահաղորդման գիծ:

Հեղեղատար համակարգ. Շահագործման փուլում անձրևի և հալոցքի ջրերը ներքին ջրհոսի ցանցով՝ 50մմ տրամագծի խողովակներով տանիքներից հեռացվելու են դեպի ճանապարհի եզրով անցնող հեղեղատար:

Աղբահեռացում. Շահագործման փուլում աղբահեռացման նպատակով տեղադրվելու են 3 հատ 1*1,5 չափերի աղբամաններ, ներառյալ տեսակավորման աղբամանները:

7. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները շինարարության, շահագործման և փակման փուլերում: Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է Արարատի մարզի Մասիսի համայնքի վարչական տարածքում: Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան հիմնականում շինարարության փուլում՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխագազերի արտանետումների, աղմուկի մակարդակի ավելացման և մեքենաների տեղաշարժի ժամանակ, որոնք կլինեն կարճաժամկետ, մասնակիորեն շահագործման փուլում՝ կաթսայատան աշխատանքի արդյունքում ծխագազերի արտանետումների տեսքով:

Գործունեության իրականացումը առաջացնելու է լանդշաֆտի որոշակի ծանրաբեռնվածություն: Այն նպաստելու է համայնքում սպասարկման ոլորտի, ծառայությունների բարելավմանը:

Հաշվետվությամբ նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ՝ բնապահպանական կառավարման պլան, որոնց ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա կլինեն նվազագույնը:

7.1 Օդային ավազան. գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում ծխագազերի և հողային աշխատանքների (փորման, բեռնման, հարթեցման) ընթացքում, ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Շինարարության փուլում օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմայի սահմաններում: Շինարարության ընթացքում, հատկապես չոր և շոգ եղանակներին, կատարվելու են շինհրապարակի և ճանապարհի

փոշենստեցման աշխատանքներ՝ ջրցան մեքենայով:

Շինարարության փուլում հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն տարածքի գոյություն ունեցող ելակետային տվյալների հետ:

Ելակետային տվյալներ

Մասիս համայնք, գյուղ Այնթապ, Երևան-Մեղրի մայրուղի, հողամաս 10/1 հասցեում՝ 0.45հա տարածքում նախատեսվում է առևտրի շենքի կառուցում: Նախատեսվող աշխատանքները նախատեսվում է իրականացնել առավելագույնը 2 տարի ժամկետում՝ 624 օրվա ընթացքում: Շինարարության իրականացման յուրաքանչյուր փուլ ունի իր ժամկետը, համաձայն որի իրականացվել է արտանետվող նյութերի հաշվարկը:

Կառուցման աշխատանքների ընթացքում իրականացվելու են հետևյալ ծավալով հողային աշխատանքներ՝

- Գրունտի հանույթ – 2860 մ³
- Հետ լիցք – 2860 մ³

Շինարարության ժամանակ օգտագործվելու է նաև ավազ՝ ավազակոպճային խառնուրդ, խիճ, բիտում, ամրակցող նյութեր և այլ շինարարական նյութեր:

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների ցանկը ներկայացվում է՝ թվով 15 շինմեքենա/շինտեխնիկա.

- ❖ Աշտարակային վերամբարձ կռունկ Potain H20/14C, կամ տվյալ տեսակին համարժեք տեխնիկական տվյալներով 1 հատ
- ❖ Ավտովերամբարձ կռունկ KC-65713-1 ,ГаличанинԵ, կամ տվյալ տեսակին համարժեք տեխնիկական տվյալներով 1 հատ
- ❖ Բեռնատար ավտոբետոնախառնիչ СБ-69Б ըստ պահանջի գ Բեռնատար ինքնաթափ MA3 5550, կամ համարժեք տեխնիկական տվյալներով 6 հատ

- ❖ Շարժական կոմպրեսոր ЗИФ - 55 В, կամ համարժեք տեխնիկական տվյալներով 1 հատ
 - ❖ Էլ.եռակցման սարք СТН 500, կամ համարժեք տեխնիկական տվյալներով 3 հատ
 - ❖ Բուրդոզեր KOMATSU D37-EX-22 կամ համարժեք տեխնիկական տվյալներով 1 հատ
 - ❖ Էքսկավատոր Hyundai 170W, կամ համարժեք տեխնիկական տվյալներով 2 հատ
 - ❖ Ձեռքի էլեկտրական գործիքներ
 - ❖ Ձեռքի մեխանիկական գործիքներ
 - ❖ Ատաղձագործական գործիքներ
- Ներկարարական գործիքներ

Մթնոլորտ արտանետվող նյութերի հաշվարկ

Շինարարական տեխնիկայի տեղաշարժը գրունտային ճանապարհով ուղեկցվում է փոշու արտանետմամբ, ինչն առաջանում է անվադողերի և գրունտային մակերեսի շփման արդյունքում, գրունտի, շինանյութերի, շինարարական աղբի տեղափոխման, դատարկման աշխատանքների ժամանակ: Շինհրապարակում անօրգանական փոշու արտանետման առավելագույն սահմանաչափը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q = \frac{C_1 \times C_2 \times C_3 \times K_5 \times N \times L \times C_7 \times q_1}{3600} + C_4 \times C_5 \times K_5 \times q_1^2 \times S \times n, \text{ գ/վրկ}$$

$$M_{\text{տարի}} = 0.0864 * M_{\text{վրկ}} * (365 - (T_{\text{сн}} + T_{\text{д}})), \text{ տ/տարի}$$

Որտեղ,

C_1 – գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի միջին բեռունանկությունը

C_2 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի տեղաշարժման միջին արագությունը

C_3 - գործակից, որը հաշվի է առնում ճանապարհների վիճակը

K_5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը

N - ամբողջ տրանսպորտի վազքը նթացների թիվն է ժամում

L - մի վազքի միջին երկարությունն է

C_7 - գործակից, որը հաշվի է առնում մթնոլորտ արտանետվող փոշու բաժնեմասը

q_1 - 1 կմ վազքի դեպքում փոշու արտանետումները մթնոլորտ

C_4 - գործակից, որը հաշվի է առնում պլատֆորմի մակերեսի նյութի պրոֆիլը

C₅ - գործակից, որը հաշվի է առնում նյութի շրջափչման արագությունը
 K₅ - գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը
 q₁² - նյութի փաստացի մակերևույթի միավորից փոշու արտանետումները
 S- պլատֆորմայի միջին մակերեսն է ,
 n- ավտոմեքենաների թիվն է
 T_{cp} – ձնածածկ օրերի թիվն է
 T_d – անձրևային օրերի թիվն է
 Աղյուսակ 8.

| Կատարվող աշխատանքի բնույթը | C1 | C2 | C3 | N | L | C7 | q1 | C4 | C5 | K5 | q12 | S | n | M, տ/տարի | Q, գ/վրկ |
|----------------------------|----|-----|-----|---|-----|------|------|-----|-----|------|-------|----|----|-----------|----------|
| Մեքենաների շարժը | 1 | 0.6 | 0.1 | 2 | 0,2 | 0,01 | 1025 | 1,3 | 1.0 | 0,01 | 0,002 | 15 | 13 | 0,037 | 0.005 |
| Գրունտի հանույթը | 1 | 0.6 | 0.1 | 2 | 0,2 | 0,01 | 1025 | 1,3 | 1.0 | 0,01 | 0.002 | 7 | 1 | 0,0013 | 0,00018 |
| Գրունտի հետվիցք | 1 | 0.6 | 0.1 | 2 | 0,2 | 0,01 | 1025 | 1,3 | 1.0 | 0,01 | 0.002 | 7 | 1 | 0,0013 | 0,00018 |

Արտանետումների վերջնական տարբերակը ներկայացվում է Աղյուսակ 3-ում
 Աղյուսակ 9.

| Աշխատանքի բնույթը | M, տ/տարի | Q, գ/վրկ |
|--|-----------|----------|
| Մեքենաների շարժը փոշի՝ 70-20% SiO ₂) | 0,037 | 0.005 |
| Գրունտի հանույթը փոշի՝ 70-20% SiO ₂) | 0,0013 | 0,00018 |
| Գրունտի հանույթը փոշի՝ 70-20% SiO ₂) | 0,0013 | 0,00018 |
| Արտանետվող փոշու ընդհանուր քանակը | 0,0396 | 0,00536 |

Փորման աշխատանքների իրականացման արդյունքում արտանետվելու է անօրգանական փոշի՝ 20-70% SiO₂ պարունակությամբ: Նախատեսվող գործունեության նախագծային տվյալների համաձայն գրունտի հանույթի համար օգտագործվելու է 1 էքսկավատոր՝ համապատասխանաբար 1մ³ աշխատանքային շերտի տարողությամբ: Ելնելով գործող մեթոդակարգից՝ արտանետվող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Q = \frac{P1 \times P2 \times P3 \times P4 \times P5 \times P6 \times B1 \times G \times 10^6}{3600} \text{ գ/վրկ}$$

P1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, 0,04

P2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու անբոցում, 0.02

P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.2

P4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.01

P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5

P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0

B1 - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5

G վերամշակվող գրունտի քանակն ըստ աշխատանքային շերտի տարողության՝ 9տ/ժ Այսպիսով,

$$Q = \frac{0,04 \times 0,02 \times 1,2 \times 0,01 \times 0,5 \times 1 \times 0,5 \times 4,5 \times 10^6}{3600} = 0,003 \text{ գ/վրկ}$$

Մեկանգամյա համախառն արտանետումը (70-20% SiO₂).

$$M = 0,0036 \times 0,003 \times 72 = 0,00078 \text{տ/շինժամ}$$

Բեռնման – բեռնաթափման աշխատանքների իրականացման արդյունքում առաջացող փոշու հաշվարկն իրականացվել է գործող մեթոդակարգի համաձայն: Թափքի բեռնաթափման աշխատանքներն իրականացվում են ուղղահայաց՝ առանց թևքի կիրառման: Բեռնաթափվում է գրունտ, ինչից առաջացող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M = \frac{K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K7 \times K8 \times K9 \times B \times G \times 10^6}{3600} \times (1 - \eta), \text{ գ/վրկ}$$

K1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է,

K2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու անբոցում,

K3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը,

K4 – գործակից, որը հաշվի է առնում տեղի պայմանները, տեղափոխման և փոշեառաջացման պայմանները,

K5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը,

K7 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը,

K8 – ուղղման գործակից տարբեր նյութերի համար՝ կախված ճանկաշերտի տեսակից

K9 – ավտոինքնաթափի համախառն բեռնաթափման ուղղման գործակից

B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը,

G – նյութի վերամշակման գումարային քանակը 1 ժամվա հաշվով, տ/ժ

դ - փոշենստեցման արդյունավետության հարաբերակցությունը մեկ միավորի հաշվով
Արտանետվող փոշու տարեկան քանակը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$M_{\text{փ}} = K1 \cdot K2 \cdot K3 \cdot K4 \cdot K5 \cdot K7 \cdot K8 \cdot K9 \cdot B \cdot G_{\text{փ}}, \text{ տ/տ}$$

где $G_{\text{շօծ}}$ – վերամշակվող նյութի գումարային ծավալն է շինարարության ողջ ժամանակատվածի համար

Գրունտ

$$M = 0,05 \cdot 0,03 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,2 \cdot 0,21 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 6 \cdot 10^6 / 3600 \cdot 0,15 = 0,000945 \text{ գ/վրկ}$$

$$M_{\text{փ}} = 0,05 \cdot 0,03 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,5 \cdot 0,4 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 422 = 0,0076 \text{ տ/տարի}$$

Մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի բնութագիրը բեռնման –բեռնաթափման աշխատանքներից

Աղյուսակ 10.

| Արտանետվող նյութ | Առավելագույն միանվագ, գ/վրկ | Տարեկան արտանետում տ/տ |
|-------------------------|-----------------------------|------------------------|
| Անօրգանական փոշի >70% | 0,000945 | 0,0076 |
| Անօրգանական փոշի 20-70% | 0,003 | 0,0106 |

Շինարարության ժամանակ աշխատող դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող ընդհանուր գազերի և վնասակար նյութերի հաշվարկն իրականացվել է համաձայն գործող մեթոդակարգի: Հաշվարկի բանաձևը արտանետվող գազերի ընդհանուր ծավալի համար իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$M' = \frac{G_4 \cdot q_i \cdot n \cdot 10^3}{3600}$$

Որտեղ, G_4 – դիզ. վառելիքի ժամային ծախսն է

q_i – i-րդ աղտոտող նյութի սահմանային ցուցիչն է՝ տ/վ

n – շինհրապարակում միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվն է:

Հետևաբար,

$$M' = \frac{G_4 \cdot q_i \cdot n \cdot 10^3}{3600} = 0,026 \cdot 0,084 \cdot 3 \cdot 10^3 / 3600 = 0,0018 \text{ մ}^3 \text{ գազային արտանետման}$$

ծավալն է:

3600

Դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող վնասակար նյութերի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$G_i = \sum_{k=1}^k (m_{\text{U}\theta\text{A}i} \cdot t_{\text{U}\theta\text{A}i} + 1,3 \cdot m_{\text{U}\theta\text{A}ik} \cdot t_{\text{U}\theta\text{A}ik}) \cdot N_k / 1800, \text{ r/c}$$

ըստ $m_{\text{U}\theta\text{A}i}$ – i -րդ նյութի սահմանային արտանետումն է չծանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ գ/ր

$1,3 \cdot m_{\text{U}\theta\text{A}ik}$ – i -րդ նյութի սահմանային արտանետումն է ծանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ գ/ր

$t_{\text{U}\theta\text{A}i}$ – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝ չծանրաբեռնված ր.

$t_{\text{U}\theta\text{A}ik}$ – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝ ծանրաբեռնված ր.

N_k – k -րդ խմբի մեքենաների վ միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվն է

i -րդ նյութի համախառն արտահանման հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$M_i = \sum_{k=1}^k (m_{\text{U}\theta\text{A}i} \cdot t_{\text{U}\theta\text{A}i} + 1,3 \cdot m_{\text{U}\theta\text{A}ik} \cdot t_{\text{U}\theta\text{A}ik}) \cdot 10^{-6}, \text{ տ/տարի}$$

| Շինմեքենաների անվանացանկ | Քանակը | Մեկ մեքենայի միջին աշխատաժամանակը | | | | | | | Աշխատանքային օրերի թիվը | Միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվը |
|---------------------------|--------|-----------------------------------|-------------------|----------------|----------------|-------------------|----------------|----------------|-------------------------|---|
| | | Օր/ժ | | | | 30ր/ր | | | | |
| | | մղղումներ | չձանրարե րնված | ձանրարե նած | Ազատ ընթացք | չձանրարե րնված | ձանրարե նած | Ազատ ընթացք | | |
| Աշտարակային կռունկ | 1 (1) | 1 | 0,433 | 0,5 | 0, 333 | 12 | 13 | 5 | 110 | + |
| Ավտովերամբարձ կռունկ | 1 (1) | 1 | 0,433 | 0,5 | 0, 333 | 12 | 13 | 5 | 95 | + |
| Էլ. եռակցման սարք | 1 (3) | 2 | 2,4 | 2,6 | 1 | 12 | 13 | 5 | 290 | - |
| Բեռնատար ավտոբետոնախառնիչ | 1 (6) | 2 | 2,4 | 2,8 | 1 | 12 | 13 | 5 | 320 | + |
| Էքսկավատոր | 1 (2) | 1 | 2,875 | 3,2 | 1,3 | 12 | 13 | 5 | 110 | + |
| բուլդոզեր | 1 (1) | 1 | 1,2333 | 1,6 | 0,6667 | 13 | 13 | 5 | 250 | - |
| կոմպրեսոր | 1 (1) | 1 | 0,2333 | 0,4 | 0,1666 7 | 13 | 12 | 5 | 110 | - |

| | | | | | | | | | | |
|------------|-------|---|---|---------|-------------|----|----|---|-----|---|
| ջրի մեքենա | 1 (1) | 1 | 2 | 2,16667 | 0,8333 3 | 12 | 13 | 5 | 380 | + |
|------------|-------|---|---|---------|-------------|----|----|---|-----|---|

| | |
|--------------------------|---|
| Աղտոտող նյութի անվանումը | i-րդ նյութի արտանետման ծավալը միաժամանակ աշխատող առավելագույն թվով մեքենաներից յուրաքանչյուրի համար հաշվարկվում է համաձայն $G_i = \sum_{k=1}^k (m_{\text{սթու}} \cdot t_{\text{սթու}} + 1,3 \cdot m_{\text{սթուik}} \cdot t_{\text{սթուik}}) \cdot N_k / 1800,$ բանաձևի, իսկ ընդհանուր գ/վրկ |
| Ածխածնի օքսիդ | 0,00362 |
| Ածխաջրածիններ | 0,003214 |
| Ազոտի օքսիդներ | 0,00409 |
| Ծծմբի երկօքսիդ | 0,00204 |
| Մուր | 0,00278 |

Աղյուսակ 5.

Դիզելային շարժիչներից արտանետվող նյութի ընդհանուր ծավալը ըստ յուրաքանչյուր աղտոտող նյութի և ըստ աշխատող մեքենայի Ամրակցման աշխատանքների ժամանակ օգտագործվող նյութերի և ներկայնյութերի համար հաշվարկն իրականացվում է համաձայն հետևյալ բանաձևի.

$$\Pi = 10^{-3} \cdot m_k \cdot (\delta a / 100) \cdot (1 - f_p / 100) \cdot K, \text{ տ/տարի}$$

Որտեղ,

m_k – օգտագործվող ներկանյութի քանակն է, կգ

δa – ներկի բաժնեմասն է, որը կորում է աէրոզոլի տեսքով, %;

f_p -լուծիչ, %;

K – աէրոզոլի տեսքով ներկանյութի նստեցման գործակիցն է,

$$\Pi_1 = 10^{-3} \cdot m_k \cdot f_p \cdot \delta' p / 10^4, \text{ տ/տարի}$$

Որտեղ,

f_p - նյութի օքսիդացման չափաբաժինն է

$\delta' p$ – լուծիչի գոլորշիացման մասնաբաժինն է, որն առաջանում չորանալուց:

Հետևաբար ամրակացման աշխատանքների ժամանակ արտանետվող նյութերի

քանակն ըստ տեսակի որոշվում է հետևյալ բանաձևով.

$$G = \frac{\Pi' \cdot 10^6}{n \cdot t \cdot 3600}, \text{ գ/վրկ}$$

որտեղ,

Π' - ամրակցման ընթացքում օգտագործվող նյութերի բաժնեմասն է, մեկ ամիս անընդմեջ աշխատելու պարագայում

n - մեկ ամսվա կտրվածքով օգտագործվող նյութերով աշխատելու անընդմեջ օրերի քանակն է

t - օրվա մեջ ներկանյութ օգտագործելու միջին ժամային քանակն է:

Այսպիսով,

$$\Pi = 10^{-3} \cdot 20,05 \cdot (30/100) \cdot (1-45/100) \cdot 1 = 0,003308 \text{ տ/տարի}$$

$$G = 0,003308 \cdot 10^6 / (10 \cdot 6 \cdot 3600) = 0,015316 \text{ գ/վրկ}$$

$$\Pi = 0,003308 \cdot 1 = 0,003308 \text{ տ/տարի}$$

$$G = 0,015316 \cdot 1 = 0,0015316 \text{ գ/վրկ}$$

$$\Pi = 10^{-3} \cdot 20,05 \cdot (45 \cdot 25 / 10^4) = 0,002256 \text{ տ/տարի}$$

$$\Pi_1 = 10^{-3} \cdot 20,05 \cdot (45 \cdot 75 / 10^4) = 0,006767 \text{ տ/տարի}$$

$$\Pi = 0,002256 + 0,006767 = 0,009023 \text{ տ/տարի}$$

$$\Pi = 0,009023 \cdot 0,5 = 0,004511 \text{ տ/տարի}$$

$$G = 0,002256 \cdot 0,5 = 0,001128$$

Այսպիսով, արտանետվող նյութերի տեսակային և քանակական տվյալները ներկայացվում են Աղյուսակ 11-ում

Աղյուսակ 11.

| Աղտոտող անվանումը | նյութի | Առավելագույն արտանետում գ/վրկ | Տարեկան արտանետում տ/տ |
|-------------------|--------|-------------------------------|------------------------|
| Դիմեթիլբենզոլ | | 0,001128 | 0,004511 |
| Կախյալ մասնիկներ | | 0,0015316 | 0,002256 |

Իրականացնելով շինարարության ժամանակ աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետման ծավալների հաշվարկները, ներկայացնենք Աղյուսակ 12-ի տեսքով դրանց ամբողջական վերլուծությունը և նկարագիրը Աղյուսակ 12.

| Շինարարական աշխատանքների փուլերը | Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը, գ/վրկ | Ժամանակահատված) | | | | | | | |
|---|--|----------------------------|---------------|--------------------|----------------|----------------|-------|---------------|------------------|
| | Անօրգանական փոշի 70-20% SiO2 | Անօրգանական փոշի > 70 SiO2 | Ածխածնի օքսիդ | Ածխաջրածիններ (CH) | Ազոտի օքսիդներ | Ծծմբի երկօքսիդ | Մոլոր | Դիմեթիլբենզոլ | Կախյալ մասնիկներ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | | | 6 | 7 | |
| Շինտեխնիկայի տեղեշարժայն թվում նաև շինադրի տեղափոխում | 0,0396 | - | - | - | - | - | - | - | - |
| Փորման աշխատանքներ | 0,003 | - | - | - | - | - | - | - | - |
| Բեռնման բեռնաթափմ | - | 0,000945 | - | - | - | - | - | - | - |

| | | | | | | | | | |
|--|---|---|---------|----------|---------|---------|---------|--------------|-----------|
| ան՝ այդ թվում շենքի կառուցման աշխատանքն եր | | | | | | | | | |
| Դիզելային շարժիչից առաջացող արտանետում ներ | - | - | 0,00362 | 0,003214 | 0,00409 | 0,00204 | 0,00278 | - | - |
| Ամրակցման աշխատանքն երից արտանետում ներ | - | - | - | - | - | - | - | 0,00112 8 | 0,0015316 |

Կառուցապատման ժամանակ արտանետվող նյութերը գտնվում են թույլատրելի սահմանային նորմերում, իսկ շինարարությունը կրելու է ժամանակավոր բնույթ, ուստի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա նույնպես:

7.2 Հողային ռեսուրսներ.

Տարածքն Գործունեության տարածքն ունի պարզ ռելիեֆային կառուցվածք: Տարածքում առկա է հողաբուսական շերտ՝ 0.0-0.40մ հզորությամբ ավազակավի, կավավազի լցոնումով: Նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է 2860մ³ ծավալի հողային աշխատանքներ: Հողային զանգվածն առաջանալու է շենքի հիմքերի փորման և ամրացման, ժամանակավոր կառույցների տեղադրման, ջրամատակարարման և ջրահեռացման, հրդեհաշիջման, էներգամատակարարման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Հողային աշխատանքներից հանված հողը՝ հողային գրունտն ամբողջությամբ օգտագործվելու է որպես հետլիցք և տարածքի հարթեցման աշխատանքների համար:

Գործունեության վայրում առկա է 120մ³ ծավալով բերրի հող, որն օգտագործվելու է տարածքի բարեկարգման նպատակով:

7.3 Ջրային ռեսուրսներ. համաձայն կատարված ուսումնասիրությունների՝ նախատեսվող գործունեության տարածքում գրունտային ջրերը գտնվում են ցածր հորիզոնների վրա: Գրունտային ջրերի մակարդակն ըստ ֆոնդային տվյալների գտնվում է մոտ 15մ խորության վրա:

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ:

7.4 Կենսաբազմազանություն. Գործունեության ենթակա տարածքում արդեն կատարվել են որոշակի հողային աշխատանքներ, որի պատճառով չկա բուսածածկ, կենդանիների բնադրավայրեր, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակների և կենդատեսակների:

Նախկինում տարածքը չի օգտագործվել:

Բուսական աշխարհ: Տարածքի հարակից հատվածներն արդեն ենթարկված են անտրոպոգեն ազդեցությունների, վայրի բուսականությունը բացակայում է: Տարածքում առկա են դեկորատիվ ծառեր՝ 5 հատ: Շինարարական աշխատանքների ընթացքում դրանք

պահպանվելու են, չեն հատվելու:

Կենդանական աշխարհ. գործունեության ենթակա տարածքն արդեն ենթարկվել է մարդկային գործունեության ազդեցությանը, ուստի առկա չեն կենդանատեսակներ, բնադրավայրեր :

Կենսաբազմազանության պահպանման նպատակով հաշվետվությունում նախատեսվում են բնապահպանական միջոցառումներ չեն:

7.5 Թափոններ.

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած խոշոր եզրաչափերի աղբ՝ շինարարական աղբի տեսքով (վտանգավորության դաս V դաս, ծածկագիր՝ 91200500 01 00 5՝ 100մ3 ծավալով,
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ /բացառությամբ խոշոր եզրաչափերի/ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 2400կգ/տարի::
- Կտորների տեսքով սև մետաղներ պարունակող թափոններ՝ (ծածկագիր՝ 35131200 01 99 5) 5մ3
- յուղերով աղտոտված ավազ(յուղի պարունակությունը - 15%-ից պակաս ՝ (ծածկագիր՝ 31402303 01 03 4)՝ 7կգ,

Այս կարգի թափոնները համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ.-ի դեկտեմբերի 25-ի՝ «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի» N430-Ն և 2006թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N 342-Ն հրամանների գործունեության արդյունքում առաջացող թափոնները պատկանում են վտանգավորության 4-5-րդ դասերին:

Շինարարության փուլում շինարարական աղբը կուտակվելու է համապատասխան անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխվելու է Մասիսի համայնքապետարանի հետ համաձայնեցված աղբավայր:

Շինարարության փուլում կենցաղային աղբը կուտակվելու է 2 հատ 1.5x1.0մ³ մետաղական կամ պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ:

Շինարարական և կենցաղային աղբը պարբերաբար հեռացվելու են մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Կենցաղային աղբի հաշվարկները

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ

n – աշխատողների թիվն է

$$M=20*120= 2400\text{կգ/տարի}$$

Շինարարությունը տևելու է 2 տարի, հետևաբար

$$M=2400*2= 4800\text{կգ/տարի կամ } 7,7\text{կգ/օր (ըստ աշխատանքային օրերի՝ 624 օր)}$$

Շահագործման փուլում կենցաղային աղբի առավելագույն ծավալը հաշվարկվել է հաշվի առնելով առևտրի կետերի առավելագույն ծանրաբեռնվածությունը՝ վարչական աշխատող՝ 35 մարդ: Շահագործման փուլում կենցաղային աղբի ծավալը կկազմի.

$$M=35*360= 12\ 600\text{կգ/տարի կամ } 34.5\text{կգ/օր:}$$

Շինհրապարակում շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) և վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

7.6 Աղմուկ և թրթռում.

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՀՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր: Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում էքսկավատորը, իսկ ավարտին գլխոնը: Միաժամանակ այս երկու շինտեխնիկան չի շահագործվում: Երկու աղմուկի աղբյուրներն էլ կրում են ժամանակավոր բնույթ: Էքսկավատորը աշխատելու է 10 ամիս աղմուկի մակարդակը՝ Laէվվ, կազմում է 85 դԲ: Գլխոնը տարածքի բարեկարգման ընթացքում՝ 6 ամիս աղմուկի

մակարդակը՝ LAէկվ, կազմում է 80 դԲ: Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014: Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝ ≤ 200 կգ/մ²: Շինության պատերը ևս հանդիսանում են միաժամանակյա աղմուկից պաշտանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևյալ բանաձևով.

$$L_{աղ} = 23 \lg m_t - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/մ}^2$$

$$L_{աղ} = 13 \lg m_t - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/մ}^2$$

Որտեղ $m = Km$ – մակերեսի խտության էկվիվալենտն է,

m – մակերեսի խտությունն է, կգ/մ²,

K –գործակից է, որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը 200 կգ/մ^2 $K=1,3$

$$M = 1,3 \times 200 = 260$$

$$L_{աղ} = 13 \lg m_t - 13 = 18,2 \text{ դԲ}$$

Շինությունից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

$$L_{Aտար} = L_{Aէկվ} - L_{աղ} = 85 - 18,2 = 66,8 \text{ դԲ}$$

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հաղիսանում են որպես պաշտպանիչ էկրան: Ձայնամեկուսացումը $R_{Ատր}$ ըստ աղուսյակ 2՝ կազմում է միջինը 50 դԲ:

$$L_{Aտար} = 66,8 - 50 = 16,8 \text{ դԲ}$$

Գլխոնի համար՝

$$L_{Aտար} = L_{Aէկվ} - L_{աղ} = 80 - 18,2 - 50 = 11,8 \text{ դԲ}$$

Մոտակա բնակելի շինությանների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, իսկ գլխոնի 11,8 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքները իրակացվելու են միայն ցերեկային ժամերին:

Թրթռում

Թրթռման նորմաները բնակելի շենքերում, ըստ ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները

| | | |
|---|---|-------------------|
| Միջին երկրաչափական հաճախականության (10-20) օկտավային շերտեր, Հց | Թույլատրելի արժեքները X_0 , Y_0 և Z_0 առանցքներով | |
| | Թրթռա արագացում | Թրթռա արագություն |

| | մ/վրկ2 .10-3 | դԲ | մ/վ .10-3 | դԲ |
|--|--------------|-----|-----------|----|
| 2 | 10,0 | 80 | 0,79 | 84 |
| 4 | 11,0 | 81 | 0,45 | 79 |
| 8 | 14,0 | 83 | 0,28 | 75 |
| 16 | 28,0 | 89 | 0,28 | 75 |
| 31,5 | 56,0 | 95 | 0,28 | 75 |
| 63 | 110,0 | 101 | 0,28 | 75 |
| Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները | 10 | 80 | 0,28 | 75 |
| <p>Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով:</p> <p>Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:</p> | | | | |

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

7.7 Արտակարգ իրավիճակներ. Համաձայն «Հայր և Որդի Տիտիզյաններ» ՍՊԸ կողմից տրված ինժեներաերկրաբանական եզրակացության՝ տեղամասը երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների տեսանկյունից պիտանի է կապիտալ շինությունների, բարենպաստ է կառուցապատման համար:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, քամիների, սողանքների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Կառույցների հիմքերի փոստրակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) եզրակացությունը:

Տեղադրվելու են տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է տեղեկատվություն շենքի նախագծողի, Կապալառուի և այլ պատասխանատու անձանց

(հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն:

Օդափոխվող և օդամշակման սարքերի տեղադրումն իրականացվելու է ըստ վերջիններիս նշանակության, միկրոկլիմայի պարամետրերի, ըստ շահագործման ռեժիմի, հրդեհային բաժանմունքերի և պայթյունահրդեհային վտանգավորության կատեգորիաների:

7.8 Մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը./Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն/.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Շինարարության ընթացքում տեղադրվելու են տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է տեղեկատվություն շենքի նախագծողի, Կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ:

Շինաշխատանքները կատարվելու են պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆԵԿ-3-480* նորմերի;

7.9 Պատմամշակութային և բնության հուշարձաններ. գործունեության և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները: Ուստի հնարավոր ազդեցությունների մեղմման միջոցառումներ չի նախատեսվում:

Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

7.10 Սոցիալական գործոններ. գործունեության իրականացումն ունենալու է դրական սոցիալական ազդեցություն, քանի որ նպաստելու է Մասիս համայնքի և Այնթափ բնակավայրի սպասարկման ոլորտի, բնակչության սպասարկման վիճակի բարելավմանը: Բացի այդ նպաստելու է բնակչության սոցիալական վիճակի բարելավմանը (աշխատատեղ

և բնակչության եկամուտների ավելացում):

Շինարարության փուլում աշխատելու է 20 մարդ, որից.

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 2 մարդ
- Արհեստագործներ և բանվորներ - 14 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ - 4 մարդ

Աշխատելու են հերթափոխային գրաֆիկով, 6 օր՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով:

Շահագործման ընթացքում շենքում հնարավոր առավելագույն աշխատողների քանակը կազմելու է 35 մարդ:

Նախաձեռնողը նախատեսում է կատարել ֆինանսական կամ համայնքային բարեկարգման ծրագրերի աջակցություն, որը հետագայում կքննարկվի համայնքի հետ:

Շինարարության ընթացքում առաջանալու են բնակիչների տեղաշարժի ժամանակավոր անհարմարություններ, որոնք հնարավոր է կանխարգելել կառավարման պլանով նախատեսված միջոցառումների կատարման միջոցով: Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտում չի նախատեսվում:

7.11 Բարեկարգում և կանաչապատում. Լանդշաֆտ. նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) կառաջանա լանդշաֆտի որոշակի ծանրաբեռնվածություն:

Շինարարության փուլում նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը բնական լանդշաֆտի վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ: Դրանք հնարավոր կլինի նվազեցնել շինարարության փուլում՝ բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների արդյունքում:

Կանաչապատում. գործունեության ենթակա ազատ տարածքի վրա նախատեսվում է կատարել որոշակի կանաչապատման աշխատանքներ՝ խոտածածկի և ծաղիկների տեսքով:

Կանաչապատ տարածքի համար ոռոգումը կատարվելու է կաթիլային եղանակով:

Ոռոգման նպատակով ջրապահանջը որոշվում է СНиП 2.04.02-84-ի համաձայն, այսինքն, 1մ^2 ոռոգման նպատակով անհրաժեշտ է 0,3-0,4լ ջուր, հետևաբար.

$$W = (M \times 0,4) \times m$$


Որտեղ, M – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի,

m – ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից և կլիմայական առանձնահատկությունից,

հետևաբար,

$$W = 1047 * 0,4 * 25 = 10\ 470 \text{ Լ/ջուր կամ } 10,47 \text{ մ}^3/\text{տարի ջուր (տարվա կտրվածքով):$$

Ոռոգումը կատարվելու է կաթիլային եղանակով: Տարածքում տեղադրվելու է 18մ³ տարողությամբ բաք՝ ստորգետնյա, որը պայմանագրային հիմունքներով լցվելու է ոռոգման ջրով և պոմպով ցնցուղներով ջրվի տարածքը:



8. Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները և վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը/կառավարման պլան/

8.1 Օդային ավազան.

Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,

- շինհրապարակը կցանկապատվի, կառուցվող շենքերը կծածկվեն համապատասխան բարձրության ցանցով՝ փոշու արտանետումները նվազեցնելու

նպատակով,

- մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս են գալու մաքուր վիճակում,
 - գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,
 - շինհրապարակում սորուն նյութերը պահել ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ կամ ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
 - բացառել տարածքում թափոնների բաց այրումը,
 - օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում,
 - բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ,
 - Կապալառուի կողմից օդի աղտոտվածության գործիքային չափումներ իրականացում՝ օդային ավազան արտանետումները վերահսկելու և նորմերը պահպանելու նպատակով:
- Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում:

8.2 Հողային ռեսուրսներ.

Հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է.

- հողի բերրի շերտը կհանվի և կպահվի համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան,
- բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը:
- նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը կմաքրվի խոշոր քարերից, թփերից, կոճղերից,
- հողի բերրի շերտը օգտահանվելու է, հեռացվելու են ապարները, պահեստավորվելու է առանձին,
- ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկել խոտաբույսերով կամ հողաթմբերի ամրացնել, ծածկել անջրթափանց թաղանթով,
- հանվող հողային զանգվածը կուտակել տարածքում՝ ծածկելով անջրթափանց թաղանթով,

- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,
- շինհրապարակն ապահովված է կլինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,
- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,
- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,
- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է ասֆալտբետոնե սալեր կամ մանրախիճ,
- մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փոխված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր, այն փոխարինելով նորով,
- մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում,
- բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարել մինչև վերջիններիս շինհրապարակից դուրս գալը:

8.3 Ջրային ռեսուրսներ.

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- անձրևաջրերը և արտադրական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան՝ 1,1 մ³ չափերի:
- ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը,
- պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես

շինադք, ժամանակ առ ժամանակ կտեղափոխվի աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով

- բետոնի լցվածությունն ապահովել այնպես, որ տեղափոխման ժամանակ բետոնի մնացորդները չթափվեն ճանապարհների, բաց տարածքներում:

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է.

- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող սանհանգույցներից՝ բիոզուգարաններից,

- Բիոզուգարանների մաքրումը կատարվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,

- շինաշխատանքները կատարել ցանկապատված տարածքում՝ մակերևութային ջրային ռեսուրսների վրա հնարավոր ազդեցությունը կանխարգելելու նպատակով:

Շահագործման փուլում առևտրի կենտրոնի ջրամատակարարման համակարգը միացվելու է համայնքային ջրատարին: Իսկ ջրահեռացման համակարգը՝ համայնքի ջրահեռացման ցանցին:

8.4 Կենսաբազմազանություն.

Կենսաբազմազանության պահպանման նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար,

- խախտված հողաբուսաշերտի հնարավորինս արագ վերականգնում՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով:

8.5 Թափոններ.

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից,

- շին հրապարակի տարածքում կհստակեցվի շին. աղբի նախնական կուտակման վայրը,

- շինարարական թափոնները՝ շինադր, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,

- մետաղական մասերն կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է 2 հատ 1,5x2մ³ չափերի պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ,

- կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,

- շինադրի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- բացառվելու է աղբի կուտակումը շիրապարակից դուրս՝ բնակելի և հասարակական, մոտակա հողամասերին կից տարածքներում,

- շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 6 հատ 1,5x2մ³ տարողության պլաստմասե աղբամաններ:

8.6 Աղմուկ և թրթռում.

Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,

- կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում,

- շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից՝ աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,

- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում,

- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,

- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը շինհրապարակից դուրս՝ բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,

- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,

- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը:

Շահագործման փուլում նախատեսվում է.

- օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում,

- օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ առաջնորդվելով համապատասխան մարմինների եզրակացություններով:

8.7 Արտակարգ իրավիճակներ.

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը,

- կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն:

- շինհրապարակը կկազմակերպվի հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան, տեղադրվելու է ջրի բաք՝ հրդեհամարման նպատակով,

- շինհրապարակն ապահովվել հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով,

- շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ մաքրել հրդեհավտանգ և պայթյունավտանգ թափոններից և աղբից,

- հակահրդեհային միջտարածությունները չօգտագործել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

- բաց պահել նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները, տեղադրել դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ,

- տեղադրել ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,

- հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխել շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահել հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- Պահպանել բուժերային գոտին՝ հյուսիս-հարավ ավտոճանապարհից,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել:

Շահագործման փուլ. Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների դեպքում նախատեսվում է.

- առևտրի սրահի ստորգետնյա հարկը ծառայելու են բնակչության համար ապաստարան արտակարգ իրավիճակներում՝ բնակչության պաշտպանական նպատակներով,

- ստորգետնյա հատվածում՝ ապաստարանի համար նախատեսվում է վթարային ելք,

- շահագործման փուլում շենքն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով(յուրաքանչյուր հարկում), օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակաձխային, արտածման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով, նկուղում տեղադրվելու է ջրի բաք՝ հրդեհամարման նպատակով,

- աստիճանավանդակի, վերելակի դռները լինելու են հակահրդեհային՝ ինքնափակվող:

8.8 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն.

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում՝ անվտանգության տեխնիկայի կանոնները անցումները, վտանգավոր զոնանները կցանկապատվեն,

- պահպանել ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- ապահովվել աշխատողների անվտանգությունը՝ բարձրության վրա,

- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,

- բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ,

- ստուգվելու են առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրել առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ,

- աշխատողների համար ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,

- ապահովել աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,

- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնետության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,

- վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները,

- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- բացառել ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս,

- բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ,

- տեղադրել լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար,

- շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ՝ լուսավորության 2 յուքսից ոչ պակաս,

- շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, հոսանքատար մասերի մեկուսացում,

- վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար:

Շահագործման փուլ.

Շահագործման փուլում բնակելի համալիրն ապահովված է լինելու հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններով՝ ՀՀՇՆ 1/-11.07.01-2006 շինարարական նորմերին համապատասխան:

Մասնավորապես նախատեսվում է.

- շենքն ապահովված է լինելու հաշմանդամների պահանջմունքին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով,
- վերգետնյա և ստորգետնյա անցումներ, թեքահարթակներ,
- տարածքի մուտքը կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

8.9 Էներգախնայողություն և Էներգաարդյունավետություն. Առևտրի սրահի էներգաարդյունավետության համապատասխանության գնահատման համար պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված է և (կամ) Զ1 ընթացակարգերի պահանջները:

8.10 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմինն (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

8.11 Սոցիալական.

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը,
 - շինարարական աշխատանքները կատարել ցանկապատված շինհրապարակում,
 - բացառել շինհրապարակից դուրս կենցաղային աղբի և շինաղբի, մեքենաների կուտակումները,
 - գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:
- Առևտրի սրահի կառուցումը նպաստելու է.
- բնակչության սպասարկման բարելավմանը, կարիքների բավարարմանը:

8.12 Լանդշաֆտ.

Նախատեսվող շինությունը լինելու է ժամանակակից լուծումներով և նյութերով

կառույց:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.


- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,
- շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը,
- կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

8.13 Բարեկարգում և Կանաչապատում.

Շենքի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում, տարածքի բարեկարգում:

Կառուցապատման աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է նաև գործունեության ենթակա ազատ տարածքի՝ 1047մ²(23%) մակերեսի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ՝ ներբակային գոտում: Կանաչապատման ծավալներն ավելի մեծ են լինելու քան նախատեսված է համայնքի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով:

Կանաչապատումն իրականացվելու է գազոնի և ծաղկանոցի տեսքով:



9. Նախատեսվող գործունեության ազդեցության Մոնիթորինգ

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է: Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ:

Այդ նպատակով նախատեսվում է.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում, բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով:
- Գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ պարբերաբար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների

պոպուլիացիաների հայտնաբերման և դրանց պահպանության նպատակով:

- Բոլոր աշխատողների աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների իրազեկում և վերահսկում:
- Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի, հակահրդեհային պահանջների համապատասխանության ապահովվում, խստիվ պահպանում:
- Թափոնների տեղափոխման կազմակերպում՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա:
- Ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար և դիտողական ստուգում:
- Շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով:
- Արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձի նշանակում, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում:
- Շինարարության ժամանակացույցի իրականացման վերահսկում:
- Բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացման վերահսկում, կանաչապատ տարածքի համապատասխանությունը կանաչապատման նախագծին ապահովելու նպատակով:
- Կանաչ զանգվածի վիճակի մշտադիտարկում, ծառերի կաչողականության ուսումնասիրություն՝ ծառերի աճն ապահովվելու նպատակով:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

10.Բողոքների ընթացակարգ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

Շինարարական բոլոր տեղամասերում ապահովվելու է կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:

Փակման փուլ. նախատեսվող գործունեության բնույթից ելելով, գործունեության փակման փուլ ,հետևաբար ազդեցություններ և միջոցառումներ չեն նախատեսվում:

11. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան

Աղյուսակ 13.

| № | Գործունեության տարածքում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները | Մեղմող միջոցառման անվանումը | Միջոցառման իրականացման պատասխանատու | Վերահսկող |
|---|--|---|-------------------------------------|------------|
| 1 | Օդային ավազան | <p>Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան, - շինհրապարակը ցանկապատված է, շենքերը ծածկել համապատասխան ցանցով՝ փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով, - մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս են գալու մաքուր վիճակում, - գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով, - շինհրապարակում սորուն նյութերը պահվել ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ՝ ծածկվելու են | Կապալառու | Նախաձեռնող |

| | | | | |
|---|---------------------------|--|------------------|-------------------|
| | | <p>անջրթափանց պոլիէթելէնային թաղանթով, - բացառվել տարածքում թափոնների բաց այրումը, - օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում, - բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:</p> | | |
| 2 | Հողային ռեսուրսներ | <p>Գործունեության իրականացման հետևանքով հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է.</p> <p>- հողի բերրի շերտը կհանվի և կպահվի համաձայն՝ ՀՀ կառավարության 02.1.2017թ. «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1404-Ն որոշման պահանջներին համապատասխան,</p> <p>- բերրի շերտը հանելու, պահեստավորելու և պահպանելու ընթացքում</p> | Կապալառու | Նախաձեռնող |

| | | | | |
|--|--|---|--|--|
| | | <p>ձեռնարկվում են միջոցներ, որոնք բացառում են դրա որակական հատկանիշների վատթարացումը:</p> <ul style="list-style-type: none"> - նախքան բերրի շերտի հանելը՝ հողի մակերեսը կմաքրվի խոշոր քարերից, թփերից, կոճղերից, - հողի բերրի շերտը օգտահանվելու է, հեռացվելու են ապարները, պահեստավորվելու է առանձին, - ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկել խոտաբույսերով կամ հողաթմբերի ամրացնել, ծածկել անջրթափանց թաղանթով, - հանվող հողային զանգվածը կուտակել տարածքում՝ ծածկելով անջրթափանց թաղանթով, - շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով, - հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, - շինհրապարակն ապահովված է լինելու | | |
|--|--|---|--|--|

| | | | | |
|--|--|--|--|--|
| | | <p>արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա, - նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը, - շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում, - այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է ասֆալտբետոնե սալեր կամ մանրախիճ, - մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քայուղերի արտահոսքի դեպքում, փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և այն փոխարինվելու է նորով, - մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում. -բոլոր մեքենաների անիվների և | | |
|--|--|--|--|--|

| | | | | |
|----------|--------------------------|---|------------------|-------------------|
| | | թափքերի մաքրումը կատարվելու է մինչև շինհրապարակից վերջիններիս դուրս գալը: | | |
| 3 | Ջրային ռեսուրսներ | <p>Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են.</p> <ul style="list-style-type: none"> - փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր, - անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող պարզարան, - ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր և պարզարանում կուտակված ջուրը, - պարզարանում մեխանիկական նստեցման հետևանքով առաջացած տիղմը՝ որպես շինադր, ժամանակ առ ժամանակ տեղափոխվելու է աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով, - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով, - ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր: | Կապալառու | Նախաձեռնող |

| | | | | |
|---|------------------------------------|---|-------------------------|--------------------------|
| | <p>Շահագործման փուլ</p> | <p>Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող սանհանգույցից՝ բիոզուգարանից: Շահագործման փուլում. - բազմաֆունցիոնալ բնակելի համալիրի ջրամատակարարման համակարգերը միացվելու են համայնքային ջրատարին: - Կոմունալ-կենցաղային հոսքաջրերի և կեղտաջրերի հեռացումը կատարվելու է դեպի համայնքային ջրահեռացման ցանց: | | |
| 4 | <p>Կենսաբազմազանություն</p> | <p>Կենսաբազմազանության պահպանման նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար, - խախտված հողաբուսաշերտի հնարավորինս արագ վերականգնում՝ բույսերի աճին հնարավորինս չխանգարելու, ինչպես նաև տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու նպատակով: | <p>Կապալառու</p> | <p>Նախաձեռնող</p> |

| | | | | |
|---|----------|--|-----------|------------|
| 5 | Թափոններ | <p>Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից, - շին հրապարակի տարածքում հստակեցվելու է շին աղբի նախնական կուտակման վայրը, - շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայրում, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր, - շինաղբի տեղափումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով, - կենցաղային աղբի և շինաղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության, - շինարարության և շահագործման փուլերում կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և հատուկ աղբահավաք ծառայությունների | Կապալառու | Նախաձեռնող |
|---|----------|--|-----------|------------|

| | | | | |
|----------|-------------------------|--|------------------|-------------------|
| | | <p>կողմից մեքենաներով տեղափոխվելու է նախատեսված աղբավայր,</p> <ul style="list-style-type: none"> - բացառվելու է աղբի կուտակումը շփրապարակից դուրս՝ այլ հասարակական տարածքներում, - շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) և վտանգավոր նյութերը և թափոնները հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից: | | |
| 6 | Աղմուկ և թրթռում | <p>Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին, - կառուցապատման տարածքում ձայնակլանիչ նյութերի և կոնստրուկցիաների կիրառում, - շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, - տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում, | Կապալառու | Նախաձեռնող |

| | | | | |
|---|-----------------------------|--|------------------|-------------------|
| | | <ul style="list-style-type: none"> - պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները, - բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ, - օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով, - պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը: Շահագործման փուլում նախատեսվում է. - օդափոխման և օդի լավորակման համակարգերում աղմուկի խլացուցիչների կիրառում, - օգտագործվող ձայնամեկուսիչ, ձայնակլանիչ, թրթռամարիչ նյութերի օգտագործում՝ համապատասխան մարմինների եզրակացությունների հիման վրա: | | |
| 7 | Արտակարգ իրավիճակներ | <p>Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի | Կապալառու | Նախաձեռնող |

| | | | | |
|--|--|---|--|--|
| | | <p>կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի(երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը,</p> <p>- կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, Կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն: -</p> <p>շինհրապարակը կազմակերպվելու է հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան,</p> <p>- շինհրապարակն կապահովվի հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով,</p> <p>- շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ մաքրվելու են հրդեհավտանգ և պայթուցավտանգ թափոններից և աղբից,</p> <p>- հակահրդեհային միջտարածությունները չեն օգտագործվելու նյութերի, սարքավորումների, տարաների</p> | | |
|--|--|---|--|--|

| | | | | |
|--|---------------------------------|---|--|--|
| | <p>Շահագործման փուլ.</p> | <p>պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,</p> <ul style="list-style-type: none"> - բաց են լինելու նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները, տեղադրվելու են դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ, - տեղադրվելու են ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար, - հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցնել: - առևտրի սրահի ստորգետնյա հարկերը ծառայելու են բնակչության համար որպես պարզագույն ապաստարան արտակարգ իրավիճակներում՝ պաշտպանական նպատակներով, | | |
|--|---------------------------------|---|--|--|

| | | | | |
|----------|--|---|------------------|-------------------|
| | | <p>- ստորգետնյա հատվածում՝ ապաստարանի համար նախատեսվում է վթարային ելք, Շահագործման փուլում շենքն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակաձխային, արտածման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով:</p> | | |
| 8 | Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն | <p>Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում պահպանվելու են անվտանգության տեխնիկայի կանոնները անցումները, վտանգավոր զոնանները ցանկապատվելու են, - պահպանել ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները, - ապահովվել աշխատողների | Կապալառու | Նախաձեռնող |

| | | | | |
|--|--|---|--|--|
| | | <p>անվտանգությունը բարձրության վրա,</p> <ul style="list-style-type: none"> - մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, - բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ, - ստուգել և ատեստավորել առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրել առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ, - ապահովվել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով, - աշխատողների համար նախատեսել սանիտարական և հանգստի պայմաններ (հանգստի սենյակ, հանդերձարան և այլն), որն ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն), - շինհրապարակում և հարակից տարածքում | | |
|--|--|---|--|--|

| | | | | |
|--|--|---|--|--|
| | | <p>տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,</p> <ul style="list-style-type: none"> - վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառելով գործնետության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները, - վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները, - նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով, - ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով, - բացառել ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս, - բեռնման-բեռնաթափման աշխատանքների | | |
|--|--|---|--|--|

| | | | | |
|--|---------------------------------|---|--|--|
| | <p>Շահագործմանն փուլ</p> | <p>ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ,</p> <ul style="list-style-type: none"> - տեղադրվելու են լրացուցիչ լուսավորման սարքերի՝ շինհրապարակի լուսավորության համար, - շինհրապարակի լուսավորությունը պետք է ապահովի հավասարաչափ՝ լուսավորության 2 լյուքսից ոչ պակաս, <ul style="list-style-type: none"> - շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, հոսանքատար մասերի մեկուսացում, - վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար, - շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ: | | |
|--|---------------------------------|---|--|--|

| | | | | |
|----------|-------------------|---|------------------|-------------------|
| | | <ul style="list-style-type: none"> - շենքն ապահովված է լինելու հաշմանդամների պահանջմունքին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով, - վերգետնյա և ստորգետնյա անցումներն ապահովված է լինելու թեքահարթակներով, - մուտքը տարածք կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով: | | |
| 9 | Սոցիալական | <p>Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը, - բացառել շինհրապարակից դուրս աղբի և մեքենաների կուտակումները, - գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը: <p>Շահագործման փուլում բնակելի համալիրի կառուցումը նպաստելու է.</p> <ul style="list-style-type: none"> - բնակչության բնակարանով ապահովվածությանը: | Կապալառու | Նախաձեռնող |

| | | | | |
|----|-----------------------------------|--|------------------|-------------------|
| 9 | Լանդշաֆտ | <p>Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են, - շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը, - կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ: | Կապալառու | Նախաձեռնող |
| 10 | Բարեկարգում և կանաչապատում | <p>Նախատեսվում է գործունեության ենթակա ազատ տարածքում և հարակից տարածքներում կատարել բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ՝ համաձայն Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի: Նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում, - կանաչ զանգվածի ոռոգում՝ բուսականության աճը և կաչողականությունն ապահովելու նպատակով, - նորատունկ բուսականության, ծառերի չկաչելու դեպքում նոր ծառատեսակներով փոխարինում: | Կապալառու | Նախաձեռնող |

| | | | | |
|--|--|---|--|--|
| | | Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է ցնցուղների միջոցով: | | |
|--|--|---|--|--|

12.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ

Աղյուսակ 14.

| հհ | Գործողություն | Նվազեցնող միջոցառումներ | Մոնիթորինգի Վայրը | Իրականացման ձևը | Ժամանակամիջոց | Մոնիթորինգ կատարող/Վերահսկող |
|----|---------------|-------------------------|-------------------|-----------------|---------------|------------------------------|
|----|---------------|-------------------------|-------------------|-----------------|---------------|------------------------------|

| | | | | | | |
|---|--|---|--|--|--|--|
| 1 | <p>Շինարարության ընթացքում օդային ավազան, ջրային և հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և կեղտաջրերի ներթափանցման բացառելուն ուղղված</p> | <p>- Փոշու և այլ օդի աղտոտիչների (CO, Nox և այլն) արտանետումների որակական և քանակական չափաքանակների պարբերական վերահսկում:</p> <p>- Ջրային և հողային ռեսուրսների որակի ուսումնասիրությունների կատարում,</p> <p>- կեղտաջրերի հեռացման՝ բիոզուգարանի տեղադրում:</p> | <p>Գործունեության ենթակա տարածքում</p> <p>Գործունեության տարածքում</p> | <p>Ստուգայցեր, գործիքային ստուգումներ</p> <p>Տեսողական դիտարկումներ, մասնագետի կողմից ստուգայցեր</p> | <p>Շինարարության և փուլում՝ ամենօրյա:</p> <p>Փոշենստեցումը տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրը 2-3 անգամ</p> <p>Պարբերաբար՝ ոչ ուշ 3 ամիսը մեկ հաճախականությամբ</p> | <p>Կապալառու Նախաձեռնող</p> <p>Համապատասխան վերահսկողական մարմիններ:</p> |
|---|--|---|--|--|--|--|

| | | | | | | | |
|----|------------------------------|--|---|--|--------------|---|--|
| 2. | Կենսաբազմազանություն. | Գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ պարբերաբար կատարել մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման և դրանց պահպանության | Գործունեության ենթակա և կից տարածքներում: | Տեսողական դիտարկումներ, մասնագետի կողմից ստուգայցեր: | Տարին անգամ: | 1 | Կապալառու Համապատասխան մասնագետ |
|----|------------------------------|--|---|--|--------------|---|--|

| | | | | | | |
|----------|--|---|---|--|-------------------------------------|---|
| | | <p>նպատակով:</p> <ul style="list-style-type: none"> - Գործունեության տարածքում շինարարական աշխատանքների կատարման ժամանակ կատարել մոնիթորինգ՝ ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակների բնադրավայրերի հայտնաբերման նպատակով: | | | Գործունեության սկզբում: | |
| 3 | Արտակարգ իրավիճակներ և աշխատանքի անվտանգություն | <p>-Աշխատողների իրազեկում՝ աշխատանքի անվտանգության արտակարգ իրավիճակների վերահսկում:</p> <p>-Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանության</p> | Գործունեության իրականացման ենթակա տարածքում | Իրազեկումներ և ստուգումներ Ստուգայցեր | Պարբերաբար ամենօրյա ռեժիմով, | Կապալառու Նախաձեռնող Համապատասխան գերատեսչությունների տեսչական |

| | | | | | | |
|---|---|---|---|----------------------------------|--|---|
| | <p>Շինարարական նորմերի պահպանում</p> <p>Աղմուկ, թրթռում</p> | <p>վերահսկում: -Բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն:</p> <p>Ամբողջ շինարարության ընթացքում շինարարության որակի չափանիշների վերահսկում:</p> <p>Աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների պահպանում:</p> | | | | <p>մարմիններ</p> <p>Տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմին Նախաձեռնող</p> |
| 4 | Նյութեր | Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից: | Լիցենզավորված կազմակերպությունների պահեստներ: | Ստուգայցեր Աղմկաչափերի կիրառում: | Հաճախակի Ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ: | Կապալառու Նախաձեռնող |

| | | | | | | |
|----|--|---|--------------------------|-------------------------------------|---|--|
